№ 191 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 31 ՕԳՈՍՏՈՍԻ 1910 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 31 ՕԳՈՍՏՈՍԻ № 191

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ
Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
4 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով):

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Кº" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՖԼՈՐԱ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փողոց, № 21.
Ընդունվում են երեխաներ 3 տարեկան հասակից: Բացված է III բաժանմունքը (այբբենարան): Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 28-ից, իսկ պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 3-ից: Ընդունվում են նմանապէս գիշերօթիկներ:
առ. 958. 6—5

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ԱՅՍՕՐ, 123-րդ անգամ
ԲԱԺԱՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ—ՀՆԴԿԱՍՏԱՆ
Անձնական տպաւորութիւններ
Չորրորդ դասախօսութիւն յայտնի ճանապարհորդուհի
Ա. Ա. ԿՈՐՍԻՆԻ
180 լուսապատկերներով, որոնք ներկայացնում են իրանցից գեղարւեստական մեծ արժէք:
Սկիզբը երեկոյեան ժ. 8½-ին:
Տեղերի գները խիստ էժանացված են:
Տոմսակները ծախվում են:
Այգում երեկոյեան ժամը 7-ից նուագում է զինւորական երաժշտախումբը:
ՎԱՂԸ՝ Հնդկաստանի մարգարիտը—ՑԷՅԼՈՆ, ԲԻՐՄԱ.—180 լուսապատկերներով:
(առ.) 1004. 0—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, երեքշաբթի, օգոստոսի 31-ին
տեղի կունենայ
Ընտանեկան երեկոյթ
Արտիստներ Ր. Ն. Պոտոցկայա և Վ. Ն. Նովացցի կը ներկայացնեն
„ՖԻՄԿԱ"
Պիէս 4 գործողութեամբ
Երեկոյթին կը նուագեն յարանուագ խումբը և սազանդարներ:
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ.:
Ներկայացման տոմսակները՝ 10—30 կ. արժողութեամբ՝ ծախվում են ժողովարանի շվէյցարի մօտ:
Ներկայացումից յետոյ՝ ՊԱՐԵՐ
Ներկայացմ. սկիզբը երեկ. ժամը 9-ին:
(ա.) 619. 1—1

ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԴԱՍԱՐԱՆ
ԴԱՇՆԱՄՈՒՐԻ
ազատ գեղարուեստագէտ-դաշնակահար
ՅՈՎՍԷՓ ԳԷՈՐԳԵԱՆ
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
Թիֆլիս, Ելիզավետինսկայա, 40.
ԴԱՍԵՐԻ ԳՆԵՐԸ.—Իր տանը՝ ամսակ. 10 ր. (2 դաս շաբաթական) և ամսակ. 8 ր. (1 դ. շաբ.): Տներում՝ ամս. 25 ր. (2 դ. շաբ.) և ամս. 15 ր. (1 դ. շաբ.): Վճարը ամսի սկզբից: Ընդունակութիւն ունեցող չքաւորներին սովորեցվում է ձրիաբար, և այդպիսիներն ընդունվում են կոնկուրսով: Համաձայն եղած ազատ տեղերի, ներկայացնելով չքաւորութեան վկայական: Չքիների տեղը 30 է: Առաջադէմներն անցնում են նաև երաժշտութեան թէօրիա: Իւրաքանչիւր տարի՝ համերգներ: Տօն օրերը դաս չէ աւանդվում (օ.մ.) առ. 985. 20—4

Ռուսաց Երաժշտական Ուսումնարանի
ՊՐՕՖԷՍՍՕՐ Է. ԲՐՕՁՁԻ
Բացի ուսումնարանից՝ տալիս է ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ մասնաւոր դասեր նաև իր բնակարանում: Տեսնել կարելի է առ. ժամը 10—2-ը և 4—8-ը երեկ.: Հասցէն՝ Театральный пер., № 10.
(օ.մ.) առ. 967. 15—5

ԿՐԹԱԿԱՆ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐԵԱԿՈՒՄ

Նոր-Նախիջևանի հայութիւնը սկզբնաւորութիւն է դնում կրթական մի նոր ձեռնարկութեան:

Հանգուցեալ Խրիմեանի կտակած գումարով հիմք կը դրվի շուտով ս. Խաչ վանքում գիւղատնտեսական դպրոցի: Ինքը վանքը իր կողմից տալիս է հողը և ամեն տեսակ յարմարութիւններ: Քաղաքացիներից մէկը խոստացել է խոշոր աջակցութիւն նոր նուիրատւութեամբ:

Մշակված է դպրոցի ծրագիրը: Որոշված է երեքամեայ դասընթացք:

Դպրոցը կը բացվի առաջիկայ 1911 թւականին:

Դա մի գեղեցիկ գործ կը լինի ոչ միայն Նոր-Նախիջևանի շրջանի, այլ և ուրիշ տեղերի համար:

Նոր-Նախիջևանի մօտ կան մի քանի հայկական գիւղեր, որոնք մեծ կարիք ունեն իրանց երկրագործական արհեստի բարւոքման: Դրանց համար գիւղատնտեսական դպրոցը թէ իր օրինակելի տնտեսութեամբ և թէ իր սովորեցրած աշակերտներով կը լինի ղեկավար՝ մտցնելու կատարելագործութիւններ գիւղական արհեստի մէջ և բարձրացնելու հողի արդիւնաբերութիւնը: Նոյն նշանակութիւնը կունենայ և այն բոլոր տեղերի համար, որտեղ կը գործեն դպրոցից դուրս եկած սաները:

Գիւղատնտեսական դպրոց հիմնելու գաղափարը ահա մի քանի տարի է, որ տարրանում է մեր երկրում, բայց անմիջական գործադրութիւն չէ ստանում: Նոր-Նախիջևանի դպրոցի հիմնվելը դրական մի քայլ է, որը արժանի է ողջունվելու: Այդտեղ կայ հիմնադրամ և կազմակերպվում է ղեկավարող մարմին:

Այս տարվանից նաև սկիզբ կը դրվի գիւղատնտեսական կրթութեան մի փորձի Շամախու գաւառի Սաղեան գիւղում: Այդտեղ Մ. Բուդաղեանի ծախքով Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան ղեկավարութեամբ կը կազմակերպվի գիւղատնտեսական դասընթացք, որը աջողութեան դէպքում կը ստանայ աւելի ամուր կազմակերպութիւն և յարատև կեանք:

Շուտով կը սկսի իր գործունէութիւնը այն կրթական փորձադաշտը, որը հիմնվում է հանգուցեալ Դաւթեանի գումարով Ղազախի գաւառի Քարվանսարա գիւղում:

Ծրագրվում են փորձադաշտեր և դասընթացքներ մեր երկրի նաև մի քանի ուրիշ կէտերում:

Միևնոյն ժամանակը մօտենում է և այն դպրոցի հիմնարկութեան խնդիրը, որը խոստացել է ապահովել Ա. Մանթաշեանը:

Այդպիսով մենք գտնվում ենք գիւղատնտեսական կրթական հիմնարկութիւնների իրագործութեան նախօրեակում: Եւ ժողովրդական ամենախոշոր արհեստը, որ դարեր շարունակ եղել է նրա գլխաւոր զբաղմունքը, կոչվում է կատարելագործութեան, հրաւիրվում է ներմուծելու բարւոքումներ թէ տեխնիկական և թէ կազմակերպչական գործի մէջ:

Մեր երկրագործի ձեռքին գտնված հողը, բեղմնաւորված կատարելագործութեան բարիքներով, կարող կը լինի մեծ չափով բարձրացնել իր արդիւնաբերութիւնը և ապրուստ տալ երկրի ժողովրդին, որը այժմ նեղվում է կարիքից իր աղքատ արդիւնաբերութեան շնորհիւ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Համբուրգ, 28 օգոստոսի

Պալատի մինիստրի հեռագիրը. «Այսօր Կայսրը Օգոստափառ Դուստրներով բարեհաճեց պատարագ լսել Նաուհէյմի ուղղափառ եկեղեցում: Պատարագը կատարեց պալատական հոգևորականութիւնը, երգում էր պալատական երգեցիկ խումբը: Այստեղ ներկայ էին նաև Նոցին Մեծութիւնների մերձաւոր շքախմբի անձերից և շատ աղօթողներ»: (Հ. Գ.)

Վիեննա, 28 օգոստոսի

Եկաւ անգլիական արտակարգ դեսպանութիւնը Գէորգ թագաւորի գահակալութեան մասին տեղեկացնելու համար: Կայարանում պատգամաւորութեանը դիմաւորեցին Վիեննայի անգլիական դեսպանը և դեսպանատան պաշտօնեաները: Դեսպանութիւնը մեկնեց պալատ: (Հ. Գ.)

Կանեա, 28 օգոստոսի

Վենիզելոսը հրաժարվեց կրետական գործադիր կոմիտէի նախագահի և կրետական ազգային ժողովի անդամի պարտականութիւններից: Այդ մասին հաղորդվեց մեծ պետութիւնների հիւպատոսներին: (Հ. Գ.)

Կիեվ, 28 օգոստոսի

Կոմս Օ'Րուրկօն տեղեկութիւն ստացաւ, որ իր դուստր Տարնովսկայայի, Պրիլուկովի և Նաումովի գործը վճռաբեկ կարգով քննվելու է հոկտեմբեր ամսում: (Հ. Գ.)

Բաթում, 29 օգոստոսի

Գիշերս ծովի վրա խորտակվեց մի կոնտրաբանդ նաւակ, որի մէջ էին 41 անցաթուղթ չունեցողներ: 23 մարդ խեղդվեցին, մնացածները ազատվեցին լողալով: (Հ. Գ.)

Օդեսսա.—Պրոֆ. Վիսոչկինը այն կարծիքի է, թէ ժանտախտը մօտ է վերջանալուն:

Բերլին.—Աղէֆը և Գարտինգը Նաուհէյմում անցնում են բժշկութեան դասընթացքը:

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 29 օգոստոսի

Սեպտեմբերի 1-ին բացվելիք ազգային ժողովի բացումը պատրիարքի կարգադրութեամբ յետաձգվեց: (Հ. Գ.)

Պարիզ, 29 օգոստոսի

Հավասի գործակալութիւնը հաղորդում է. «Հեռագիրները ընդգծում են, որ Կ. Պօլսի մամուլի մէջ բանակռիւ է մղվում թիւրքական փոխառութեան մասին: Բոլորովին սխալ է, որ խօսքը վերաբերում է այժմ փոխառութիւնը կոտիրովկայի թոյլ տալու մասին, և որ ֆրանսիական կառավարութիւնը գործում է իբր այս կամ այն ֆինանսիստների շահերի համար: Կառավարութեան միջամտութիւնը նպատակ ունի որոշել անհրաժեշտ քաղաքական և տնտեսական երաշխաւորութիւններ, առանձնապէս այնպիսիները, որոնց յոյս ունեն ստանալ Ֆրանսիայի դրամատէրերը, որոնցից նշանաւոր գումարներ են մտցված թիւրքական ձեռնարկութիւնների մէջ: Այս կերպ ներկայացած հարցը կարող է քննվել և լուծվել սոսկ երկու շահախնդիր կառավարութիւններից: (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան.—Ոստիկանութեան կարգադրութեամբ ցուցակագրվում են բոլոր զինախանութները, որոնք պէտք է պահեն առանձին ինվենտարի գիրք, և զէնք կարող են ծախել միայն իշխանութեան տուած թոյլատրիչ վկայականներով: Պարսիկ առևտրականները չափազանց դժգոհ են, որովհետև զինավաճառներից շատերը ռուսահպատակներ են, որոնք չեն ցանկանում հնազանդվել այս կարգադրութեան, յենվելով Թիւրքմէնչայի պայմանագրի վրա, որի մէջ նման սահմանափակումներ նախատեսված չը կան:

Արդաբիլ.—2000 ձիաւորներ ապստամբվում են Ղարադաղից Գիլան՝ գիլանցիներին և մազանդարանցիների հրոսակախմբերին զսպելու համար:

Ապստամբների գլուխ կանգնած են կեղծ մուջահիդների պարագլուխներ Մուիզ-ուս-Սուլթանը և Սիփէհդարի էմիսարները:

ՄԱԿՍԻՄ ԳՕՐԿԻՆ ԵՒ ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԸ

«L'Humanité»-ի վերջին համարում իտալացի յայտնի սոցիալիստ և հրապարակախօս Ամիլկար Չիպրիանին իր «Un roi socialiste» յօդուածում պատմում է Մաքսիմ Գորկիի հետ Նէապոլում պատահած մի հետաքրքրաշարժ դէպքի մասին, երբ նա Կապրիից այնտեղ էր գնացել քաղաքը դիտելու համար:

Գորկին իր սովորական «մուժիկի» հագուստով փողոցներում թափառելու ժամանակ կանգ առաւ այն ապարանքի առաջ, որտեղ երբեմն ապրել են Նէապոլի թագաւորները, որոնց արտաքսեց Գարիբալդին: Այդ ապարանքն այժմ պատկանում է իտալական թագաւորներին, որոնք ամառը, յաճախ է պատահում, անց են կացնում այդտեղ:

Մաքսիմ Գորկին մօտեցաւ վանդակապատին և հարցրեց պահապանին՝ «կարելի՞ է արդեօք դիտել ապարանքը»: Զինւորը նայեց այդ օտարոտի հագնված մարդուն և ոչինչ չը պատասխանեց: Այն ժամանակ Մ. Գորկին տուեց նրան իր այցետոմսը, խնդրելով յանձնել պահակախմբի օրապահ օֆիցերին: Քիչ ժամանակից յետոյ նա տեսաւ մի երկարահասակ մարդու, որ արագ իջնում էր ապարանքի աստիճաններով դէպի պարտէզը: Նա արագաքայլ մօտեցաւ Գորկիին, երկու ձեռքը մեկնեց նրան և սիրալիր կերպով հրաւիրեց ներս:

— Ո՞ւմ հետ պատիւ ունեմ խօսելու:

— Թագաւորի,—յաջորդեց պատասխանը:

Թագաւորը անձամբ ցոյց տուեց ռուս գրողին ապարանքի բոլոր հետաքրքրաշարժ մասերը, ցածրանալով իր հիւրի հետ նոյնիսկ ապարանքի խոհանոցը: Յետոյ նա հրաւիրեց Գորկիին իր առանձնասենեակը, որտեղ նրանց մէջ խօսակցութիւն բացվեց արուեստի, գրականութեան և սոցիալիզմի մասին:

— Թագաւորը,—ասում է Գորկին,—կլասիկ արուեստի սիրահար է, սիրում է նոյնպէս ռուսական գրականութիւնը: Նա ինձ ցոյց տուեց իմ գրուածքների թարգմանական ժողովածուն, կարդալով մի քանի երես այնպէս, ինչպէս ես ինքս երբեք չէի կարդացել: Նա ծանօթ է Տօլստոյի, Տուրգենևի և Անդրէևի բոլոր գրուածքներին:

Գրականութիւնից խօսակցութիւնն անցաւ սոցիալիզմին:

— Ես սոցիալիստ եմ,—յայտնեց ինձ թագաւորը,—սակայն իմ սոցիալիզմը աւելի ինդիվիդուալիստական է և արմատական, քան ժամանակակից սոցիալիստների մեծ մասի սոցիալիզմը: Ես բացասաբար եմ վերաբերվում սոցիալիստական կուսակցութեան ծրագրին, որը զբաղվում է բացառապէս կեանքի տնտեսական կողմով: Միւս կողմից ես խիստ հակառակ եմ, որ պետութիւնը նախաձեռնողը լինի որևէ տնտեսական սիստեմի որոշման: Ես համոզված եմ, որ դրանից առաջ կը գնայ իմպերիալիստական վտանգ, որովհետև ամեն ինչ կարող է մէկի կամ մի փոքրակի կամայականութեանը ենթարկվել: Համայնքները պիտի կատարեն մեծ մասամբ այն՝ ինչ պահանջում են պետութիւնից սոցիալիստները: Միակ բանը, որ պիտի կազմի պետութեան անքննաբարելի սեփականութիւնը, դա կրթութեան վրա լինելիք հսկողութիւնն է:

Այստեղ Մաքսիմ Գորկին,—գրում է Չիպրիանին,—երևի մոռանալով որ խօսում է թագաւորի հետ՝ հարցրեց. «Դուք հանրապետակա՞ն էք»:

Թագաւորը զուարթագին ծիծաղեց և ասաց.

— Սիրելիս, ես այն եմ՝ ինչ ցանկանում է ժողովուրդը: Եթէ նա ցանկանում է ունենալ թագաւոր՝ տուէք նրան ազատութիւն ունենալ թագաւոր, իսկ եթէ ցանկանում է հանրապետութիւն՝ նա կարող է ունենալ նրան: Այն՝ ինչ ինձ թւում է անհրաժեշտ՝ դա «Համաշխարհային Միացեալ Նահանգներն» են (Les Etats Unis du monde): Այս համաշխարհային կոնֆեդերացիան պիտի ունենայ իր նախագահը, որը կընտրվի իւրաքանչիւր 5 տարին մի անգամ:

— Մենք խօսեցինք դարձեալ ուրիշ շատ բաների մասին, ըստ որում թագաւորը ափսոսաց, որ թագուհին չը մասնակցեց մեր խօսակցութեան:

— Դուք հաւանօրէն չը գիտէք,—նկատեց նա ինձ ծիծաղելով,—որ ընտանեկան կեանքում ես կոչում եմ իմ կնոջս «ընկեր Հելինէ» (compagnonne Heléne).

Սրանով վերջացաւ Մաքսիմ Գորկիի խօսակցութիւնը իտալական թագաւորի հետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՂՈՒՄ ՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ *)

II

1896-ից մինչև 1906 թւականը, այսինքն այդ մի տասնամեակի ընթացքում, մեր հասարակական կեանքը, շնորհիւ արտաքին և ներքին հարուածների, շնորհիւ վայրագ քաղաքականութեան, ներքին անտէրութեան, յուսախաբութեան, եկած գաղթականութեան, ազգային կուսակցութիւնների եսականութեան, վայրագութեան և իսկական ղուլդուրութեան, աւելի ևս հիւանդոտ վիճակի էր հասել, և երբ վերաբացվեցին մեր դպրոցների դռները, այդ հիւանդութեան կործանիչ ալիքները ամենավայրագ ուժով ներս սպրդեցին նրա պատերի ներսը, և ներս սպրդեցին հոգաբարձական և ուսուցչական մարմինների միջոցով, մարմիններ, որոնք փոխադարձ ընտրեալներ էին, իսկ բուն ընտրող, դպրոց պահող, զաւակ ուղարկող, դանդաղ, ծանրաշարժ, բայց խելացի և փիլիսոփայ ժողովուրդը գործից կտրված էր և կտրված է: Եւ ինչպէս կարող է նա կապվել մի դպրոցի հետ, որը խաբել է սրա բոլոր յոյսերը, սոսկալի հարուածներ տուել նրա ազգային կեանքին և ոչ մի բարեփոխութիւն չէ մտցրել սրա տնտեսական կենցաղավարութեան մէջ. երբ ինքը հազար անգամ աւելի բան գիտէ իր արտ ու՝ արօտից, իր դաշտից ու դարմանից, ցանից ու աշխատանքից, քան իր գրագէտ, մեծ-մեծ խօսող, գիւղից փախած, սուտ ազգասէր և այլ բազմաթիւ պակասութիւնների տէր որդին ու աղջիկը:

Նա տեսնում է, որ այս 5 տարվայ ընթացքում նրա ուսումնարանը չէ փոխվել, որ դարձեալ ներս են սողում այդ տաճարների շեմքից այս և այն կուսակցութեանց ճարլիկներ, որոնցից նա զզված է, հիասթափված և բնականաբար երես է դարձնում այդ կենսական հաստատութիւններից, ոչ նրա և ոչ էլ ուսուցիչների ապահովութեան մասին է մտածում. և, ասում ենք, դա շատ բնական է և այդպէս շատ երկար կը շարունակվի, եթէ շուտով լուրջ միջոցներ չը դիմենք հիւանդութիւնը արմատական կերպով բժշկելու համար:

Յիշում եմ, թէ ինչպէս էինք բերան սովորում մանկավարժական առարկաներն անցնելիս, որ ուսման և դաստիարակութեան նպատակն է կրօնական բարոյական մարդ կրթելն ու պատրաստելը, և աւանդելիք առարկաներն էլ այդպէս էինք դասաւորում:

Պէտք է նկատել, որ մեր անցած 28 առարկաներից միայն 4-ը կարող էին գիտութիւն կոչվել՝ բնախօսութիւն, մաթեմատիկա, գրականութեան պատմութիւն և աշխարհագրութիւն. Մնացածները նախ որ մեծ մասամբ խլամ էին և երկրորդ այնքան վատ էին աւանդվում, որ միևնոյն բանն էին դառնում, ինչ որ էր Գնունու դասագրքով աւանդված աստուածաբանութիւնը: Եւ այդ ծանրոցով մենք մուտք էինք գործում՝ կրթելու մեր մատաղ սերունդը...

Եթէ չը լինէր կեանքի փորձը և ռուսաց լեզւով գոյութիւն ունեցող հարուստ մանկավարժական գրականութիւնը, որոնցից տարաբաղդաբար շատ քչերն էին օգտվում, վայն եկել տարել էր մեր խեղճ սաներին:

Վերջին տարիներս ես ականատես եղայ թւանշաններ գործածել չը գործածելու վէճին, և այդ վէճը տեղի ունեցաւ ամբողջ Ռուսաստանում:

Երկրորդական և միանգամայն ծիծաղելի խնդիր: Մեր դպրոցական առարկաների մեծ մասը մնացել է խլամ, անկարող է կենդանի հետաքրքրութիւն ներշնչել սաներին, գիտութիւն չէ, կտրված է կեանքից և բնութիւնից, և մենք այդպիսի խնդիրներով յոյս ունենք բժշկել դպրոցը:

Պարոններ, ժամանակ է հասկանալու, որ մենք ուսուցչական կոնտինգենտ չունենք, որովհետև մեր դպրոցներից ոչ մէկը իր ներկայ ծրագրով ուսուցիչներ չէ կարող պատրաստել և չէ պատրաստում և դրանում մեղաւոր չեն ուսուցչական պաշտօն ստանձնողները: Ինչ որ տուել էք, այն էլ կը տան. 600 ր. վճարէք, այդ է նրանց պաշարը, 1000 ր. վճարէք, դարձեալ նոյնն է լինելու: Իր պաշտօնի սրբութիւնը հասկացող մարդը ինչքան էլ ստանալու լինի, դարձեալ կը տիրանայ այն ջանքերին, ինչ որ իրան հարկաւոր է, իր սանիկների դար-

---

*) Տես «Մշակ» № 190.

ցացման և դաստիարակութեան համար, իսկ անպէտքը՝ թաշկինակ պահելու պարտականութիւնն էլ չի իւրացնի և լարանականների աչքի առաջ դասարանից դուրս կը փախչի բեխերի վրայից վազող կեղտոտութիւնները նախասենեակում ձեռքով սրբելու համար։ (Ճեմարանում տեղի ունեցած փնչերից)։

Կարդացի եկող ուսումնական տարվայ ընթացքում, որպէս փորձ, գործադրվելիք ծրագիրը։

Բազմաթիւ, խելացի առարկաներ...

Բայց ո՞վ պիտի աւանդի, ի՞նչ նպաստող ժողովածուներով, պատկերներով և բնագիտ. կաբինէտների օժանդակութեամբ, ո՞րպիսի նպաստից գրականութեան և գրադարանների շնորհիւ, ի՞նչ ծաղկոցների, բանջարանոցների, այգիների և այլ վայրերի շնորհիւ։ Ո՞րտեղ են նրանք, ո՞վ է մշակել, ո՞վ է դասաւորել նրանց։ Ո՞րտեղ, ո՞ր ուսումնարանին կից գոյութիւն ունեն նրանք։ Մեր ուսուցիչներից ո՞րն է պատրաստ այդ առարկաներից մեծ մասն ուսումնասիրելու և դասաւանդելու։ Եւ դուք մի՞թէ կարծում էք, որ այդ նոյն ծրագրով կարելի է առաջնորդել Շիրակի, Արարատեան դաշտի, Թիֆլիսի, Կարսի, Շուշու և Գորու գաւառի երեխաներին, գիւղացուն ու քաղաքացուն, սարեցուն և դաշտեցուն և այն էլ միդասեան և երկդասեան դպրոցներում։

Մի՞թէ դուք կարծում էք, որ այդպիսի միջոցներով կը փակվի դպրոցի և ժողովրդի, ուսուցիչների և հոգաբարձական մարմնի, հոգևոր իշխանութեան և ժողովրդի միջև բացված անջրպետը։

Չափազանց սխալվում էք, եթէ այդպէս էք կարծում։

Եղիշէ Մուրադեան

Անափա, 20 օգոստոսի

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Էջմիածնի Մայր Տաճարի Նորոգութեան Յանձնաժողովը յայտարարում է մրցանակ (կօնկուրս)՝ կազմելու նորոգութեան նախագծեր այն ծրագրով, որ մշակել է Թիֆլիսում ճարտարապետներից բաղկացած և նկարիչներից Մասնաժողովը։

Անկախ երեք հրաւիրված ճարտարապետներից, որոնց իւրաքանչիւրին տրվում է 500-ական րուբլի վարձատրութիւն, հրաւիրվում և թոյլատրվում է մասնակցել մրցանակին նաև բոլոր այլ ճարտարապետներին, թէ տեղական և թէ այլ քաղաքների։

Յիշեալ կօնկուրսին—մրցանակին—մասնակցելու ցանկութիւն ունեցող անձինք առաջնորդվելու համար՝ բացի մրցանակի սոյն պայմաններից՝ ստանում են խմբականից վիմագրութեամբ հանված 9 թերթ գծած նկարներ, սաժէնին մի դիւյմ մասշտաբով։ Մրցակիցները նորոգութեան յատակագիծը կազմելիս պէտք է առաջնորդվին հետևեալ պարտաւորեցուցիչ պայմաններով։

1) Վերականգնել Տաճարի նախկին ցոկոլը (Նկարներին կցվում է Տաճարի հին ցոկոլի լուսանկարը)։

2) Թողնել զանգակատունն ամբողջութեամբ առանց փոփոխութեան։

3) Թողնել անփոփոխ կողքերի երկու մուտքը։

4) Պահպանել անփոփոխ կողքերի երկու ապսիդները և գլխաւոր սեղանի երեք գմբէթը. իսկ կենտրոնի գմբէթի նկատմամբ թոյլատրվում է փոփոխել միայն նրա տանիքի թեքութիւնը։

5) Ոչնչացնել կողքի գմբէթների շուրջը իբրև ամրոց շինած շրջապարիսպը և վերականգնել ըստ հնարաւորութեան պսակող կարնիզները և ֆրօնտօնն իրանց նախկին դիրքով, որոնց մնացորդները ցոյց են տրված գծված յատակագծի վրա։

6) Պէտք է վերցնել արևելեան կողմի շինութիւնը (Թանգարանը), որովհետև անհամապատասխան է տաճարի ընդհանուր ձևին և ոճին։ (Թանգարանի սահմանները յատակագծի վրա նշանակված են կէտաւոր №№ գծերով)։

7) Ի նկատի առնելով, որ գլխաւոր սեղանի երկու կողմի հին խորանները չեն կարող լիովին բաւարարել հանդիսաւոր օրերի և Տաճարի կարիքների ներկայ պահանջներին, ուստի անհրաժեշտ է ծրագրել այդ նպատակի համար հին խորանին կից մի նոր լրացուցիչ շինութիւն արևելեան կողմից, Տաճարի ոճով, որ բաղկացած լինի երեք բաժանմունքից՝ աւանդատուն 20 քառակուսի սաժէն տարածութեամբ, թանգարան 20 քառ. սաժէն տարածութեամբ և մասանց խորան՝ 6 քառակուսի սաժէն։

8) Հիւսիսային սեղանը պէտք է ունենայ Տաճարի յատակից 7 աստիճան բարձրութիւն, իւրաքանչիւր աստիճանը 5 վերշօկ։ Հարաւային սեղանի աստիճանների թիւը և բարձրութիւնը մնում են անփոփոխ։

9) Յատակագիծը պէտք է ունենայ 4 ֆասադների պատկեր, լայնութեան ու երկարութեան կտրուածքներ, նոր յաւելեալ շինութեան կտրուածք և լրացուցիչ պարզաբանող նկարներ (чертежъ)։ բոլորը պէտք է գծված լինեն սաժէնին մի դիւյմ մասշտաբով։ Պարզաբանող գրաւոր բացատրութիւններ պարտաւորիչ չեն, բայց ցանկալի են։

10) Էջմիածնի Տաճարի վերանորոգութեան յանձնաժողովը համեմատաբար ամենալաւ ծրագրի համար նշանակում է մի պրեմիա 1000 ր. վարձատրութեամբ, սակայն հրաւիրված ճարտարապետները, պրեմիայի արժանանալու դէպքում, կը ստանան լրացուցիչ միայն 500 րուբլի։

Բացի դրանից ժիւրին վերապահվում է իրաւունք յանձնարարել Էջմիածնի յանձնաժողովին ձեռք բերելու պրեմիայի չարժանացած ծրագիրներից մէկը 500 րուբլի վարձատրութեամբ։

11) Պրեմիայի ստացումը իրաւունք չէ տալիս հեղինակին աշխատանքի վրա հսկելու, այլ հսկողի ընտրութիւնը ամբողջապէս կախված է Էջմիածնի Տաճարի վերանորոգութեան յանձնաժողովի և Թիֆլիսի մասնախմբի փոխադարձ համաձայնութիւնից։

12) Յատակագիծը պէտք է ներկայացնեն գրպանակների մէջ և ոչ ծալած դիրքով. սրանց կցված կը լինեն փակ ծրարներ, ուր պէտք է նշանակված լինեն հեղինակի անունը, հայրանունը և ազգանունը, նոյնպէս և նրա մանրամասն հասցէն։

13) Յատակագիծը ներկայացնելու համար տրվում է հինգ ամիս ժամանակամիջոց կօնկուրսը յայտարարելու օրից հաշուելով։ Ժամանակամիջոցը լրացած օրվայ ժամը 12-ից յետոյ տեղական ճարտարապետներից այլ ևս չէ ընդունվում յատակագիծ, իսկ այլ քաղաքներից պօստին յանձնելու վերջնական ժամանակամիջոցը համարվում է նոյն օրը (այսինքն՝ փետրվարի 1-ը) և իբրև ապացոյց պէտք է այդ օրվայ թուով պօստից ստացած ապահովագիրը առանձին նամակով ուղարկեն։

14) Յատակագիծը պէտք է ուղղեն հետևեալ հասցէով.—Թիֆլիս, Էջմիածնի տաճարի նորոգութեան յանձնաժողովին. գեղեցիկ արուեստները հովանաւորող կովկասեան ընկերութեան, Դաւիդովսկայա փողոց, № 2։

15) Այն յատակագծերը, որոնք համապատասխան չեն լինի կօնկուրսի վերոյիշեալ պայմաններից որևէ մէկին կամ նշանակեալ ժամանակին չեն ներկայացվի, բոլորովին չեն ենթարկվի քննութեան։

16) Յատակագծերը Թիֆլիսում կը տրվեն ի տես հասարակութեան միայն պրեմիայի արժանանալուց յետոյ։

17) Մրցանակաբաշխութեան որոշումից յետոյ միւս բոլոր յատակագծերը, բացի մրցանակի արժանացածից, գնելու համար յանձնարարվածից (եթէ գնվին), և երեք ճարտարապետների պատուիրված յատակագծերը (որոնք բոլորը կազմում են Էջմիածնի սեփականութիւն), միւսների տէրերը պէտք է յետ վերցնեն ոչ ուշ, քան մի ամիս, որից յետոյ չը վերցված յատակագծերը դառնում են Էջմիածնի յանձնաժողովի սեփականութիւն։

18) Կօնկուրսի նախագծի մասին լինելու նկատմամբ ծագած հարցերը պէտք է կօնկուրսը յայտարարելուց ոչ ուշ քան, մինչև 20 օրը, ուղղեն վերոյիշեալ հասցէով (տես 14-ը §), իսկ հարցերին տրված պատասխանները կը տրվեն կովկասեան տեղական թերթերում և Պետերբուրգում հրատարակվող «Зодчій» թերթում 2 ամսվայ ընթացքում կօնկուրսը յայտարարվելուց սկսած։ Մրցանակի հետևանքի մասին կը հրատարակվի նաև նոյն թերթերում։

19) Ժիւրին հրաւիրվում է Թիֆլիս հետևեալ կազմով.

1) Մեսրոպ եպիսկոպոս, 2) Գարեգին վարդապետ, 3) Բիլ-Ֆէլդ, 4) Բարանով, 5) Տէր-Միքայէլեան, 6) Ռօտինով, 7) Թադէոսեան, 8) Ֆէթվաճեան և 9) Գրինեվսկի։

Նորին Սրբութիւնը հաստատեց Էջմիածնի Տաճարի վերանորոգութեան մրցանակի այս ծրագիրը հայրապետական կօնդակով 1910 թ. յուլիսի 31-ին, թիւ 1775։

Դիւանապետ՝ Բագրատ վարդապետ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կարս, 26 օգոստոսի

Մեզանում քաղը ահա երեք շաբաթ է ինչ վերջացել է։ Գարու բերքը այս տարի առատ է, իսկ ցորենինը միջակ։ Ինչ վերաբերում է ցորենի հասկի բարձրութեանը, պէտք է ասել, որ լաւ է, բայց ցողունը լիքը չէ, և սրանից է բերքի միջակութիւնը։

Խոտի բերքը այս տարի, համեմատած անցեալ տարվան, առատ է։

Եղանակները փոփոխական են։

1825, 1855 և 1877—78 թւերի պատերազմների արձանը, որ կանգնեցված է տեղիս զինուորական այգում, արդէն բացված է և շուտով կօծվի։ Արձանը շինված է կարծր քարից, իսկ չորս կողմում տեղաւորված են չորս զօրապետների բրօնզեայ արձանները. այդ զօրապետներն են՝ Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչը, Լօրիս-Մելիքեանը, Մուրավիէվը և Պասկէվիչ-Էրիվանսկին։ Արձանի վրա դրօշակը բարձր պահած կանգնած է ռուս զինուորը, իսկ նրա ոտքերի տակ փռված է թիւրքական դրօշակ՝ կիսալուսինը վրան. ռուսական երկգլխանի թևատարած արծիւը կրծում է թիւրքական դրօշակը։

Շաւարշ

ԽՈԼԵՐԱ ԵՒ ԺԱՆՏԱԽՏ

Բիւլլետէն.—Օգոստ. 28-ի առ. ժ. 9-ից մինչև օգոստ. 30-ի առ. ժամը 9-ը Թիֆլիսում խոլերայով հիւանդացել են 2 հոգի, իսկ խոլերանման հիւանդութեամբ 1 հոգի։ Հիւանդանոցում կային 12 հոգի, աւելացել են 2, ներկայումս կան 13 հոգի։

28 օգոստոսի

Պետերբուրգ.—Օրվայ մէջ խոլերայով հիւանդացան 65, մեռան 19, բժշկվում են 632։

Խոլերայով հիւանդացել և մեռել են մի շաբաթվայ ընթացքում. Կիեվի նահ. հիւ. 688, մեռ. 279, Կօստրօմայի նահ. հիւ. 153, մեռ. 62, Կուրսկի նահ. հիւ. 182, մեռ. 102, Նիժնի-Նովգորոդում հիւ. 94, մեռ. 50, Սիմբիրսկի նահ. հիւ. 378, մեռ. 183, Տամբովի նահ. հիւ. 554, մեռ. 295, Խարկովի նահ. հիւ. 316, մեռ. 188, Խէրսոնի նահ. հիւ. 619, մեռան 255, Օդեսայում հիւ. և մեռան 7, Օմսկում հիւ. 97, մեռան 60, Սամարայի գաւառում հիւ. 1,944, մեռան 345, Ռոստով Դ.վ. քաղաքապետութեան մէջ հիւ. 5, մեռան 3, Սիմֆերօպօլի նահ. հիւ. 114, մեռան 52, Դաղստանի շրջանում հիւ. 182, մեռան 68։

Սեվաստօպօլ.—Թիւրքաց կառավարութեան կարգադրութեամբ Ռուսաստանից Պօլիս գնացող ճանապարհորդները ենթարկվում են 5 օրով կարանտինի Սինօպում։

Կօպից (Սակսոնիա).—Խոլերայով հիւանդացաւ 1 բանուոր։

Վաշինգտօն.—Խոլերայի վտանգն աչքի առաջ ունենալով, իտալական և ֆրանսիական նաւահանգիստներում Միացեալ Նահանգների հիւպատոսներին պատուիրվեց հինգ օրով պահել երրորդ կարգի ռուս ճանապարհորդներին և նրանց իրեղէնները՝ առաջ քան թոյլատրութիւն տալը մեկնելու նաւով Ամերիկա։ Համբուրգի, Բրէմէնի և ուրիշ նաւահանգիստների հիւպատոսներին պատուիրված է խիստ հետևել որպէսզի ամերիկական կառավարութեան գաղթականական կանոնները չը խախտվեն։ Եւրոպական բոլոր նաւահանգիստները ուղարկվում են ամերիկական սանիտարական պաշտօնեաներ։

Մոսկվա.—Քաղաքային սանիտարական գործադիր յանձնաժողովը գտաւ, որ հիմք չը կայ Մոսկվան յայտարարել ժանտախտից վտանգաւոր։

29 օգոստոսի

Պետերբուրգ.—Խոլերայով հիւանդացան 58, մեռան 23, բժշկվում են 625։

Օգ. 16—29-ը խոլերայով հիւանդացան Վորոնէժի նահանգում 446 հոգի, մեռան 245. Ուֆայում հիւ. 75, մեռան 37։

Կ. Պօլիս.—Եդիրնէում և շրջակայքում խոլերայով հիւանդացան 14, մեռան 6 հոգի։

(Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Օդեսայից վերադարձաւ բժ. Խարազեանը, որ քաղ. վարչութեան առաջարկութեամբ գնացել էր ծանօթանալու մկները ոչնչացնելու միջոցների հետ։ Բժշկի պատմելով կռուի միջոցները պալիատիվ են Օդեսայում, և հէնց այդ է պատճառը, որ համաճարակը դեռ շարունակվում է։ Այս օրերս տեղի կունենայ բժշկական-սանիտարական մարմնի նիստը բժ. Խարազեանի զեկուցումը լսելու համար։

◆ Վերադարձաւ Պետերբուրգից երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի կովկասեան լիազօր Արխիպօվը։

◆ Այսօր Թիֆլիսի Արքունական թատրոնում երեկոյեան ժամը 8½-ին տեղի կունենայ յայտնի ռուս ճանապարհորդուհի Կօրսինի չորրորդ գիտական հանրամատչելի դասախօսութիւնը՝ «Բաջանների աշխարհը—Հնդկաստան», որի ժամանակ ցոյց կը տրվեն 180 լուսապատկերներ։ Ժամը 7-ից այգում նուագում է զինուորական երաժշտախումբը։

◆ Տիկին Ա. Կօրսինին իր դասախօսութիւնները Թիֆլիսում կաւարտէ սեպտեմբերի 8-ին։ Սեպտեմբերի 9-ին նա մտադիր է մեկնել Էջմիածին և ներկայանալ Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Ապա նա չորս օր կը շրջագայէ Երևան, Ալէքսանդրօպօլ, Կարս և կը կարդայ իր հետաքրքրական դասախօսութիւնները։ Տիկինը Քութայիսում ևս կարդալու է իր դասախօսութիւնները սեպտեմբերի 16-ից։

◆ Լսում ենք, որ ներկայ ձմեռ կը սկսի հրատարակվել Թիֆլիսում առողջապահութեան վերաբերեալ հանրամատչելի պարբերական թերթ հայերէն լեզուով։

◆ Մեզ հաղորդում են, որ հանգուցեալ Յովհաննէս Արամեանցի այրին, ի յիշատակ իր ամուսնու, յատկացրել է գիւղատնտեսական գրքոյկների հրատարակութեան համար տարեկան 125 րուբլի։

◆ Վրաց Դրամատ. Ընկ. վարչութիւնը, որոշելով տօնել այս տարի Վրաց Դրամատ. Ընկ. գոյութեան 30-ամեակը, դիմում է բոլոր հաստատութիւններին, վրաց բեմի գործիչներին, գրողներին և շինական ինտելիգենցիային, խնդրելով ուղարկել վարչութեանը վրաց բեմի վրա աշխատած անձանց լուսանկարները և կենսագրութիւնները, խմբերի լուսանկարներ, դեկօրացիաների նկարներ, աֆիշներ, հին ձեռագիր և տպագրված պիէսներ, յիշողութիւններ արտիստների կեանքից, տեղեկութիւններ ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ

V*)

Յունիսի 5-ն էր։

Առաւօտեան շատ վաղ զարթնեցինք։ Թէյ խմելուց յետոյ՝ դարձեալ ծովեզերք իջանք, ուր քիչ ժամանակ անցկացնելուց յետոյ՝ գնացինք Բաթումի եկեղեցիները տեսնելու։

Ամենից առաջ տեսանք կաթօլիկների եկեղեցին, որը, համեմատած միւս դաւանութիւնների եկեղեցիների հետ, ամենից շքեղ և նուրբ ճաշակով շինվածն էր։ Ժամը 2-ն էր, երբ մենք բոլոր եկեղեցիները տեսել էինք։ Երկար ժամանակ այս ու այն կողմ ման գալով մենք շատ էինք յոգնել, ուստի շտապեցինք դպրոց և հանգստացանք, որից յետոյ ճաշեցինք և ապա կրկին գնացինք զբօսանքի։

Ժամը մօտաւորապէս 4-ն էր։ Գնացինք նաւահանգիստ, որովհետև մի քանի մեծ նաւեր կային, որ դեռ չէինք տեսել։ Ամենից առաջ մտանք ռուսական մարդատար նաւը։ Այդտեղ մեզ սիրով ընդունեցին և ուրախութեամբ յանձն առան ցոյց տալ նաւի նշանաւոր մասերը։ Տեսանք, թէ ինչպէս են բեռները դարսում նաւի ստորին մասում. ցոյց տուին, թէ որտեղից է գալիս շոգին որ նաւը գնում է և այլն։ Մնացած նաւերն էլ տեսնելուց յետոյ դուրս եկանք։ Օդը ամպել էր և սկսեց սաստիկ անձրևել։

Մենք շուտով հասանք այնտեղ, որտեղ դարսում էին բոլոր բեռները, և անձրևից պատսպարվեցինք մի քանի րոպէ։ Անձրևը շուտով դադարեց, և մենք շտապեցինք դէպի դպրոց։

Արևն արդէն սկսել էր թեքվել դէպի իր մուտքը. անձրևի պատճառով երեկոյեան զգալի կերպով զովացել էր օդը, այնպէս որ մի կողմից մրսում էի, իսկ միւս կողմից զգում յոգնածութիւն։ Ճանապարհին մեր աւ.-ուսուցիչը մեզ համար նկարազարդ բաց-նամակներ գնեց։ Մենք նրան խնդրեցինք, որ թոյլ տայ վերցնելու Բաթումի տեսարաններից։ Նա չը մերժեց, և մենք ամենքս էլ վերցրինք զանազան տեսակները, ինչպէս օրինակ Բաթումի ընդհանուր տեսքը, բուլվարը, ծովեզրը։

Մօտաւորապէս ժամը 8-ն էր, երբ հասանք դպրոց։ Թէյ խմեցինք-վերջացրինք և կրկին անգամ ցանկութիւն յայտնեցինք ծովեզերք գնալու, որովհետև անձրևի պատճառով ծովը սաստիկ բարձրացել էր և ալիքների ձայնը գալիս էր մինչև դպրոց։ Բայց մեր ցանկութիւնը կիսաճանապարհին մնաց, որովհետև հազիւ էինք դուրս եկել դպրոցից և մի քանի քայլ արել, ահա անձրևը նորից սկսեց սաստիկ թափով տեղալ։ Մենք շտապեցինք դպրոց։ Անձրևը սաստկացաւ. ամպերն ահեղապէս գոռգոռում էին, կայծակը շանթում։ Քամին շարունակում էր շառաչել. ծառերի բարձր գագաթները ուժգին ընդհարվելով միմեանց՝ բարձրացնում էին ահեղ սօսափիւն, որի արձագանքը գարնանային հեղեղի նման հնչում էր։ Անձրևը մի քանի անգամ դադարեց և կրկին սկսեց։ Մենք շատ փորձ արինք գնալ ծովափ, բայց անձրևի այդպիսի փոփոխակութիւնը արգելք հանդիսացաւ։ Մենք էլ մեր քնելու տեղերը պատրաստեցինք և շտապեցինք քնել։

Ժամը 10-ն էր երբ բոլորն էլ քնել էին բացի ինձանից։

Դրսում սաստիկ մութն էր։ Անձրևը շարունակում էր գալ, բայց իմ քունը չէր տանում, չը նայած որ սաստիկ յոգնած էի։

Պատի ժամացոյցը խորհրդաւոր կերպով չխկ-չխկում էր. դրսում երկինքը գոռգոռում և անձրևն էլ շարունակում էր գալ, իսկ ծովի ալիքները անախորժ կերպով շառաչում էին և կարծես թէ լաց էին լինում։

VI

Հետևեալ օրը, կիրակի, յունիսի 6-ին, առաւօտեան շատ վաղ վեր կացանք և թէյ խմելուց յետոյ ուզում էինք կրկին ծովեզերք գնալ, որովհետև ծովը գիշերվայ յորդահոս անձրևի պատճառով սաստիկ բարձրացել էր։ Ես և իմ ընկերուհիներից մէկը խնդրեցինք աւ.-ուսուցչին, որ, քանի դեռ վաղ է, գնանք մեր բարեկամների մօտ։ Նրանցից թոյլտւութիւն ստացանք մեր ծանօթների մօտ մնալու միայն երկու ժամով։ Որոշված ժամին երբ ուսումնարան գնացինք, պ. Հովուեանը ասաց, որ պատրաստվենք, մեր նոր շորերը հագնենք, և մենք շատ ուրախացանք։

Ժամը 1-ը չը կար, երբ կառքերով գնացինք եղբ. Մնտոյեանների տունը, ուր հրաւիրված էինք ճաշի։ Անձրևը դեռ շարունակում էր անընդհատ գալ։ Մնտոյեանների տանը մենք հանդիպեցինք սրտագին ընդունելութեան։

Աշակերտուհիներս տանտիրուհու առաջնորդութեամբ մտանք մի մեծ դահլիճ, որտեղ արդէն պատրաստել էին ճաշի սեղանը, և բոլորս էլ կարգով նստեցինք իրար մօտ, իսկ յետոյ նստեցին ուսուցիչները և ուսուցչուհիները։ Բացի մեզանից Մնտոյեանները հրաւիրել էին և մի քանի ուրիշ մարդկանց։ Սեղանակիցներից Աշոտ Մնտոյեանը բաժակ առաջարկեց Ախալցխայի ամբողջ դպրոցի թէ աշակերտների և թէ աշակերտուհիների կենացը։ Բաժակ առաջարկողը երկար խօսեց և բարոյական խրատներ տուեց մեզ. Նրա խօսքերը բոլորիս վրա էլ թողեցին լաւ տպաւորութիւն։ Նա խօսում էր այնքան պարզ և հասկանալի, որ չէր կարելի չըմբռնել և չը հասկանալ նրա խօսքերի բուն իմաստը։

Մեր ընկերուհիների միջից մի քանիսը առանձին երգեր երգեցին, ինչպէս օրինակ՝ «Արիք, հայկազունք, յառաջ ընթանանք», «Ուր են երջանիկ այն քաղցիկ օրեր» և այլն։

Մնտոյեանը նոյնպէս առաջարկեց առանձին մեր դասարանի, այսինքն՝ VI բաժանմունքի կենացը և մեզ բարի խրատներ տուեց։ Նոյնպէս նա առաջարկեց խմել մեր աւագ-ուսուցչի, միւս ուսուցիչների և ուսուցչուհիների կենացը առանձին, և նրանք բոլորն էլ խորին շնորհակալութիւն յայտնեցին։ Ի միջի այլոց խօսեց և մեր աւագ-ուսուցիչը պարզ և դիւրըմբռնելի լեզուով։

Ճաշի ամբողջ ընթացքում մենք իւրաքանչիւր կենացի վրա, ղեկավարութեամբ մեր երգեցողութեան ուսուցիչ պ. Տէր-Կարապետեանի, երգում էինք զանազան երգեր, օրինակ «Մեր հայրենիք», «Ահա սուրհանդակի սայլակը», «Ծիծեռնակ», «Մայր Արաքսի ափերով» և այլն։ Երգում էինք նոյնպէս ռուսերէն երգեր։ Պ. Տէր-Կարապետեանը ամբողջ ճաշի ժամանակ, որը տևեց մի քանի ժամ շարունակ, երգում էր և մեզ զուարթ տրամադրութիւն ներշնչում։

Ժամը մօտաւորապէս 7-ն էր, որ մենք շնորհակալութիւնը յայտնեցինք բոլորին և դուրս եկանք Մնտոյեան ընտանիքի բնակարանից, ուր մեզ այդքան սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց։ Մնտոյեանների տնից դուրս գալով՝ կամենում էինք էլեքտրական գործարանը գնալ, բայց անձրևը յանկարծ այնպէս վրա տուեց, որ բոլորս էլ թրջվեցինք և ստիպված եղանք մօտակայքում գտնվող ռուսաց եկեղեցին մտնել՝ պատսպարվելու համար։

Եկեղեցում կատարում էին երեկոյեան ժամերգութիւն։ Եկեղեցում իմ ուշադրութիւնը գլխաւորապէս գրաւեցին դասաւորված զանազան սուրբերի արձանները, ինչպէս և պատերի նկարները, որոնք վերին աստիճանի նուրբ գործ էին։ Եկեղեցուց դուրս գալով մենք, չը նայած անձրևի անընդհատ թափվելուն և հազար ու մի անյարմարութիւններին, հասանք էլեքտրական կենտրոնական կայարանը։

Այնտեղ պ. Հովուեանը խնդրեց, որ մեզ թոյլ տան տեսնելու գործարանը, բայց որովհետև կառավարիչը ներկայ չէր, մեզ ներս չընդունեցին, խնդրելով մի ժամից յետոյ գալ, երբ կառավարիչն եկած կը լինի։ Կայարանը բաւական մօտ լինելով գործարանին՝ մենք շտապով դիմեցինք այնտեղ։

Մի ժամից յետոյ մենք, դուրս գալով կայարանից, ուղղակի գնացինք գործարան։ Ցուրտ էր և քամի, իսկ մեր շորերը բաւականին թրջվել էին անձրևից։ Դողդողալով հասանք գործարան։ Կառավարիչն այնտեղ էր և մեզ ընդունեց սիրալիր կերպով ու պատուիրեց, որ բաժանվենք երկու խմբի։ Նրա պատուէրը կատարեցինք իսկոյն և խմբերից մէկը կառավարչի հետ գնաց տեսնելու էլեքտրական հոսանքը, իսկ միւս մասը մնաց իր հերթին սպասելով։ Մենք տեսանք շոգեմեքենաները, շոգու գործողութիւնները և փոփոխութիւնները, էլեքտրական ույժի հաւաքվելը և, վերջապէս, հաղորդիչների միջոցով տարածվելը քաղաքի զանազան հիմնարկութիւններում։ Մանրամասն տեղեկութիւններ ստանալով դուրս եկանք։ Այնուհետև կառավարիչը առաջնորդեց միւս խմբին, իսկ մենք աւագ-ուսուցչի հետ միասին կառքեր նստեցինք և գնացինք դպրոց։ Սաստիկ յոգնած էինք, ուստի պատրաստվեցինք քնելու։ Իսկ աւագ-ուսուցիչը վերստին դարձաւ միւս խմբի մօտ։ Կէս ժամ չանցած եկան և միւս աշակերտուհիները։

VII

Հետևեալ առաւօտ շատ վաղ վեր կացանք։ Պ. Հովուեանը, ըստ սովորականին, աշակերտուհիներիս միջից ընտրեց երկուսին՝ օրապահներ լինելու։ Շատ վաղ թէյ խմելուց և ախորժակով պանիր հաց ուտելուց յետոյ մեր օրապահները սեղանը մաքրեցին և թէյի բաժակները լուացին։ Ապա պատրաստվեցինք կայարան գնալու։ Ուսուցչուհիները մի զամբիւղում պատրաստեցին պաշարեղէն—հաց, պանիր, ձու և երշիկ—և վերցնելով զամբիւղը շուտով հասանք կայարան՝ գնալու համար Չակվա՝ թէյի պլանտացիաները տեսնելու։ Կայարանում մեզ տեղաւորեցին առանձին վագօնում։ Մեզանից իւրաքանչիւրն աշխատում էր պատուհանի մօտ նստել՝ ճանապարհին շատ բան տեսնելու համար։

Պատուհաններից դուրս նայելով՝ մենք տեսանք, որ փոքրիկ տղաները կողովներով վաճառում էին տեսակ-տեսակ մրգեղեններ, օրինակ՝ տանձ, շլոր, կեռաս և այլն։ Մեր ախորժակը գրգռվեց և ուզեցինք անպատճառ գնել և ուտել։ Այդ մասին յայտնեցինք մեր բոլոր ընկերուհիներին, բայց մեծամասնութիւնը չը համաձայնվեց և նոյնիսկ սպառնաց այդ մասին յայտնել աւ.-ուսուցչին։ Մենք, ի հարկէ, յետ կանգնեցինք մեր ցանկութիւնից։

Գնացքը շարժվեց։

Արևը բաւականին բարձրացել էր, առաւօտեան ցօղը դեռ չէր ցամաքել խոտերի վրայից, արեգակի ճառագայթները՝ խաղալով մարգարտեայ կաթիլների հետ՝ արտափայլում էին ծիածանի գոյներով։ Հեռաւոր լեռները դեռ պատած էին ճերմակ ու թափանցիկ մշուշով։

Գնացքը անցնում էր կանաչազարդ դաշառաջին անգամ պիէս խաղալու մասին, մասնակցողների ցանկը և այլն։

---

*) Տես «Մշակ» № 189.

◆ Դոկտոր Յակոբեանը Թիֆլիսի նահանգապետին խնդրամատոյց է եղել թոյլ տալ հրատարակել Թիֆլիսում Սարգսեանի խմբագրութեամբ մի շաբաթաթերթ ասորերէն «Ղասդ-Սուրայի» անունով։

◆ Մեզ հաղորդում են, որ առաջիկայ սեպտեմբերի 18-ին, շաբաթ օրը, տեղի կունենայ Թիֆլիսի հասարակական կլուբի առաջին երեկոյթը։ Այդ օրը կը կարդացվի մի զեկուցում «Ազգութիւնների միութեան ընկերութեան» կովկասեան ճիւղի բացման մասին։

◆ Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը արտատպել է «Մշակից» Հ. Առաքելեանի՝ Ֆինլանդիայի մասին թղթակցութիւնը։ Խմբագրութիւնը այդ թղթակցութիւնը գտնում է «խիստ շահեկան և հիւթեղ մէկ նամակ»։

◆ Այս օրերս Քութայիսից Թիֆլիս ժամանեց վրաց ծերունազարդ բանաստեղծ Ակակի Ծերեթելին և իջևանեց «Վետցել» հիւրանոցում։

◆ Ներկայումս Գոլովինսկի պրոսպեկտում, Միրզոյեւների հողաբաժնի վրա, ուր Նիկիտինների նախկին ցիրկն էր, կառուցանվում է մայրաքաղաքի յայտնի Տրուցցիի փայտաշէն ցիրկը։ Տրուցցին մտադիր է ընդմիշտ հաստատվել Թիֆլիսում և տալ պարբերաբար ներկայացումներ։ Սակայն կարգադրված է, համաձայն քաղաքային վարչութեան պարտադիր որոշումների, շինութեան աշխատանքները ժամանակաւորապէս դադարեցնել, որովհետև վարչութիւնը պահանջում է փայտէ շինութեան փոխարէն կառուցել քարաշէն։

◆ Նահանգական քաղաքային գործերի ատեանի վերջին նիստում որոշվել է դատարանին յանձնել մի քանի յանցագործութիւնների պատճառով Թիֆլիսի քաղ. վարչութեան արխիտեկտորի պաշտօնակատար Հալաճեանին և Թիֆլիսի արհեստաւորաց վարչութեան գրագիր Մելիք-Շահնազարեանին։

◆ Նուխեցի Աբդուլլահ-Շէվքէթ Աբդուլ Րահմանովը Գանձակի նահանգապետից թոյլտուութիւն է ստացել բանալ Նուխում տպարան։ Յիշեալ անձը մտադիր է թուրքերէն հրատարակել հանրամատչելի գրքոյկներ, բրօշիւրներ և, գործերի լաւ ընթանալու դէպքում, մի շաբաթաթերթ ևս։

◆ Բագւում մի խումբ երիտասարդ թուրքեր մտադիր են հրատարակել թուրքերէն մի գրական շաբաթաթերթ «Ենի ֆէիւզատ» (Նոր բարիք) անունով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՏԻԿ. Ա. Ա. ԿՈՐՍԻՆԻԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռուս յայտնի ճանապարհորդ տիկ. Ա. Ա. Կորսինիի առաջին երկու դասախօսութիւնները, որ տեղի ունեցան ամսիս 28-ին և 29-ին, Արքունական թատրոնում, բաւականին մեծ բազմութիւն էին գրաւել։

Պէտք է ասել, որ թէև յարգելի տիկնոջ հաղորդած աշխարհագրական ու էտնօգրաֆիական տեղեկութիւններից մեծ մասը խիստ տարրական են և պատրաստված, երևի, հասարակութեան աւելի լայն խաւերի համար, բայց և այնպէս, շնորհիւ նիւթերի լաւ դասաւորված լինելուն ու մանաւանդ շնորհիւ ցոյց տրված գեղեցիկ լուսապատկերների, դասախօսութիւնները բաւական հետաքրքրական են դառնում։

Իւրաքանչիւր դասախօսութիւնը տևում է 2 ժամ, 15 րոպէ ընդմիջումով։

Առաջին դասախօսութիւնը Աւստրալիայի մասին էր, իսկ երկրորդը՝ Հնդկաստանի, որ դեռ վերջացած չէ. շարունակութիւնը կը լինի այսօր և վաղը երեկոյեան։ Բոլոր դասախօսութիւնները լինելու են 12։

Արժէ լսել տիկնոջը։

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1) I. Орбели, «Каталогъ Анійскаго музея древности», СПБ. 1910. Цѣна 1 рубль. 2) I. Орбели, «Краткій путеводитель по городищу Ани», СПБ. 1910. Цѣна 40 коп.

Պրօֆեսոր Մառի աշակերտ և օգնական Յ. Օրբելին կազմել է վերև նշանակված երկու գրքերը՝ դիւրացնելու դէպի Անի ճանապարհորդողների և Անին ուսումնասիրողների գործը։

Գրքի յօրինողը իր առաջաբանների մէջ տալիս է մի քանի ընդհանուր տեղեկութիւններ Անիի ուսումնասիրութեան գործի կազմակերպութեան և թանգարանի հիմնադրութեան մասին։

Այնուհետև նա տալիս է մանրամասն տեղեկութիւններ այն առարկաների մասին, որոնք յայտնագործված են Անիում պեղումների և հետախուզութիւնների ժամանակ։

Այդ տեղեկութիւնները կարելին չափ մանրամասն են և կարող են մեծապէս նպաստել Անի այցելողներին ծանօթանալու Անիի թանգարանի հարստութիւնների հետ։

Ներկայ գրքերի երևալը բաւարարութիւն է տալիս մի պահանջի, որ սկսել էր զգացվել վերջին տարիներում։

Գրքոյկները ունեն որոշ թւով պատկերներ, իսկ ուղեցոյցը պարունակում է Անիի յատակագիծը։ Ա. Ք.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԵՐ ԲՈՂՈՔԸ

Մեր ծննդավայրն է Վասպուրականի նահանգի Անձախիձոր գաւառի Ղօթուր կամ Կոտոր գիւղաքաղաքը։ Այս գիւղաքաղաքը սահմանակից լինելով Հեր, Զարեհաւանդ, Աղբակ և Արտազ գաւառներին՝ միշտ ենթարկվել է այդ գաւառներում բնակվող քիւրդ էլաթների յարձակման և աւարառութեանը։

Տարիներից ի վեր ենթարկված այս աւարառութեանը՝ հայ ազգաբնակութիւնը պահպանել է սերտ կապով իր մայրենի լեզուն, ազգային աւանդութիւնը և իր աղքատիկ եկեղեցին. միայն ընդմիշտ զուրկ է եղած կանոնաւոր ուսումնարանից, թէև երբեմն տէր-թօղիկեան տիրացուներից ոմանք եկել են ժամանակաւորապէս մի կտոր Սաղմոս, Ժամագիրք դասաւանդել ու անցել։ 1894 թւին տողերիս գրողը՝ Վանի Երեմեան դպրոցից՝ եկայ հայրենիք և առաջին գործս եղաւ դպրոցի հաստատումը, ուր, դժբաղդաբար, ուսումը հազիւ մի տարի և կէս տևեց, դպրոցը փակվեց՝ հետևեալ անցքի պատճառով։

Կոտորին, նախ քան 70-ական թւականները, տիրապետում էր օսմ. պետութիւնը, իսկ ռուս-թիւրքական պատերազմից յետոյ նա անցաւ պարսից տիրապետութեան ներքոյ 18 գիւղերով միասին։

Երբ 1896 թւականներին Թիւրքահայաստանն անխնայ ներկվում էր հայի արիւնով, զերծ չը մնաց այդ ահռելի կոտորածից և մեր Կոտորը։ Քանիցս անգամ ենթարկվելով շրջակայ քիւրդերի յարձակման՝ վերջ ի վերջոյ հարկադրված ամբողջ գիւղը մի անգամից գաղթեց Խոյ քաղաքին կից Վառ ասված գիւղը։ Չը նայած որ Վառումը հաստատվելով մի կերպ իրան ապահով էր երազում կոտորցին, բայց կեանքի պահանջը ստիպում էր այդ աշխատասէր ժողովրդին պատուաւոր կերպով ապրեցնել իր գերդաստանը և շէնացնել իր նախահարց հիւրասէր և պայծառ օջախը. Նրա այս տագնապալի րոպէներին անպակաս էին իր գլխից անուանական ազգասէրները, որոնք իրանց սին և դատարկ յոյսերով համոզում էին դժբաղդ կոտորցուն՝ ապահովեցնելով միանգամայն, որպէսզի էլի վերադառնան իրանց ծննդավայրը ու շէնացնեն իրանց հայրենի տները։

Քաղցր է հայրենիքը, անմոռանալի են ամեն մի քարն ու ձորը, աղբիւրներն ու գետակները, բարեխառն օդն ու ջուրը, ծաղկաւէտ լեռներն ու բերրի դաշտը. ահա այս ամենը մտաբերելով կոտորցին, պահ մի արհամարհեց քիւրդի սուրն ու թուրը, և վճռեց, որ էլի վերադառնայ իր քաղցր ու կարօտալի վաթանը։

Բայց աւա՜ղ, նա ականատես լինելով իր վրա կատարվող ահարկու սպանդին, ամբողջ մարմնով սարսռում էր և խուսափում մի այդպիսի քայլ անելու։

Ի վերջոյ ակամայից հարկադրված Կոտորի ժողովուրդն եկաւ այն համոզմունքին, որ իւրաքանչիւր տուն միայն իր տան կէս մասն ուղարկի. իսկ կէսը մնայ Վառ գիւղում, մինչև տեսնէ ապագան ինչ է վճռում իր համար։

Այս ժամանակին էր, այն է 1897 թւին, որ տեղի ունեցաւ Մազրիկ ցեղի վրա արշաւեն Խանասօրաւմը, որից յետոյ նոյն ցեղի պետը՝ Շէրիֆ բէգը, վրէժառութեամբ լցված, իր ամբողջ թոյնը թափեց Վառ գիւղում եղող կոտորցիների և վառեցիների վրա, անխնայ կոտորելով այս գիւղում բնակվող հայերին. ապա վերադառնում է Կոտոր, որպէսզի այնտեղ եղած հայերին ևս վերջ տայ ու հանգիստ վերադառնայ իր տունը, բայց Կոտորում բնակվող դրացի քիւրդերը համոզում են հայերին, որ եթէ նրանք մահմեդականութիւն ընդունեն, իրանք կարող են ազատել նրանց Շէրիֆի սրից. հայերն ընդունում են մահմեդականութիւն և ազատվում են կոտորածից։

Այն օրվանից մինչև օրս անցնում են մեր վրայից տասնեերեք տարիներ, և մենք կոտորցիներս՝ թւով 15 տուն, որ մի կերպ աջողվեց մեզ ազատվել կոտորածից, գաղթել ենք Էջմիածին. այս 13 տարվայ ընթացքում էլ հաստատութիւն չը մնաց որ չը դիմեցինք. քանի-քանի անգամ դիմել ենք հանգուցեալ կաթողիկոսին, աղերսել, խնդրել, որ մեր հայրենակիցներին բռնի քիւրդացրել են, մի ճար արէք, որ էլի վերադառնան իրանց մայրենի եկեղեցու գիրկը. դժբաղդաբար մեր աղերսի ու մրմունջի ձայնը մնաց ձայն բարբառոյ։ Մենք՝ վերջերս, երբ Կարապետ վարդապետը եպիսկոպոս եղաւ, նրան ևս դիմեցինք, որպէս Ատրպատականի առաջնորդի, որից ևս ստացանք բացասական պատասխան։

Այս առիթով դիմում ենք մամուլին յայտնելով մեր իրաւացի գանգատը. խնդրում ենք յայտնել ի լուր աշխարհի, որ թերևս արձագանք գտնի մեր իրաւացի բողոքը և որով հնար լինի մեր հէգ հայրենակիցներին կրկին վերադառնալ իրանց մայրենի եկեղեցու գիրկը։ Թէև մենք 15 տուն կոտորցիներս Էջմիածնում ենք, 5 տուն էլ Պեատիգորսկումն են, 8 տուն էլ Հին-Նախիջևանին կից Թումբուլ գիւղում, 13 տուն էլ Խոյ քաղաքում, իսկ 22 տուն Կոտորում, քիւրդացած, մենք ևս անհաստատաբնակ լինելով, այստեղ այնտեղ թափառում ենք, և վաղ թէ ուշ վերջանալու վրա ենք։

Թիւրքիացի և նոյն իսկ պարսկաստանցի գաղթականներն ուրախ-ուրախ վերադառնում են իրանց հայրենիք, իսկ մենք կոտորցիներս մի կտոր չոր քար անգամ չունենք սեփական, որի վրա դնենք մեր գլուխը։ Ապա էլ որին դիմենք մենք, որպէսզի մեզ համար էլ մի ճար անեն, մի վայր գտնեն, որով ազատվենք ներկայ կորստաբեր դրութիւնից։

Թէև Կոտորը գտնվում է պարսից պետութեան ձեռքը, ինչպէս որ վերևը յիշել եմ, ներկայումս գրեթէ անիշխանական դրութեան մէջ է։ Շկակցի մի քիւրդ բէգ՝ Սմկօ անունով, օգտվելով Պարսկաստանի ներկայ դրութիւնից, եկած է բռնի նստելու Կոտորում, որը քանի-քանի անգամ արշաւել է Սալմաստի հայ գիւղերի վրա և մեծ աւարով վերադարձել Կոտոր. այս արշաւանքների ժամանակ բռնի տանում է իր հետ Կոտորում քիւրդացած հայերին, որոնց իր նեղ ընկած ժամանակ թշնամու գնդակին է տալիս. մինչև օրս այդ առիթով մեռել են հինգ անձինք։

Ի դիմաց Էջմիածնում գաղթած կոտորցիների՝ Կոտորի վարժապետ

Մկրտիչ Խաչատրեան

Վաղարշապատ, 24 օգ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 22 օգոստոսի

Նախընթաց նամակումս գրել էի, որ Թեմակալ Կարապետ եպիսկոպոս Միանդաբից ուղևորվեց մօտիկ Թազիապատ գիւղը։ Այստեղում կազմեց գործակալական խորհուրդ, որը պէտք է հսկէ շրջակայքի 3—4 գիւղերի վրա։ Յիշեալ խեղճ ու կրակ տեղերում համարեա հայկական ոչինչ չէ մնացել՝ ոչ լեզու, ոչ կրթարաններ և ոչ իսկ հոգևոր մխիթարութիւն։ Անցած տարի միայն մի քահանայ ձեռնադրվեց 4 գիւղերի եկեղեցական կարիքները լրացնելու համար։ Թազիապատում վեց տարի է ինչ գոյութիւն ունի Թաւրիզի Հայուհեաց Բարեգործ. Միացեալ Ընկերութիւնների պահած միակ ուսումնարանը Ղազարեանի կտակի հաշւին. սակայն և այնպէս անխնամ և ամեն մի հսկողութիւնից ու կօնտրօլից ազատ, որի հետևանքը լինում է այն, որ անտեսուչ և անհոգաբարձու ուսումնարանը ենթարկվում է ուսուցչի քմահաճոյքին, այնպէս որ ուսուցիչը երբ որ կամենում է՝ բաց է անում ուսումնարանը, ժամերը անորոշ, դասաւանդութիւններն անկատար ու անյայտ։ Հէնց սկզբնական տարիներից ընկերութիւնների վարչութիւնները յամառ ձգտումն են ունեցել ուսումնարանները վարել անկախ թեմական իշխանութիւնից, շատ անգամ առանց շրջիկ տեսուչների հսկողութեան, որով ուսումնարանների առաջադիմութիւնը մատնել են ամուլ մի դրութեան։ Եթէ ի նկատի ունենանք մի կարևոր հանգամանք, որ վարչութեան յարգելի տիկինները անձեռնհաս են հեռաւոր գիւղերում կրթական գործը փափագելի պայմաններում պահպանելու համար, հետևաբար աւելի ճիշդն այն կը լինի, որ թեմական իշխանութեան խորհրդով ու գործակցութեամբը կառավարվեն ուսումնարանները, և, եթէ հնարաւոր է, Հայուհեաց Ընկերութեանց պահած գիւղական ուսումնարանների վրա տեղական գործ. խորհուրդները կամ դպրոցական հոգաբարձութիւնները, եթէ կան, իրաւասութիւն ունենան հսկելու իբրև փոքրագոյն չարիք։ Մենք համոզված ենք, որ յարգելի տիկիններն ուրախութեամբ կը համաձայնեն մեր յայտնած մտքի հետ, ինչ որ թեմակալ սրբազանի էլ ցանկութիւնն է իբրև ականատեսի։ Կարապետ եպիսկոպոս յորդորեց գիւղացիներին, որ նիւթական փոքր ի շատէ օժանդակութիւն տան ուսումնարանին, և յորդորները արձագանք գտան գիւղացիների մօտ։

Թեմակալը Թազիապատից իր քայլերն ուղղեց դէպի Քիւրդիստան՝ Սօուջ-Բուլաղ։ Թաթաւ գետի միւս ափից սկսվում է Քիւրդիստանը, որի կենտրոնումն է գտնվում Բեալքալա-Րիզա գիւղը, ուր մի քանի տուն հայեր կան. այնտեղից քիւրդ ձիաւորներով անցաւ Սօուջ-Բուլաղ։ Այդ գիւղաքաղաքումն է գտնվում հայազգի Փարվիզ խան Սէրհէնգը, այնտեղի պահակ խմբի շէֆը և զինւորական ներկայացուցիչը, որը փառաւոր ընդունելութիւն ցոյց տուեց թեմակալին։ Սօուջ-Բուլաղի և առ հասարակ Քիւրդիստանի միահեծան տէրերը բացարձակապէս քիւրդերն են։ Այստեղ կան 12 տուն հայեր և մի քանի եկւոր առևտրականներ. ունեն մի փոքր եկեղեցի՝ աղբ ու կեղտի մէջ ծածկված. սրբազանը մաքրել տուեց և պատուիրեց խնամքով պահել միակ աղօթատեղին։ Այստեղի եկեղեցին նշանակութիւն ունի և այն կողմից, որ նոյն տեղում է թաղված յայտնի գերմանացի երիտասարդ լեզուագէտ դոկտ. Դաւման, որի հայրը «Licht und Leben» թերթի խմբագիրն էր և մի տարի առաջ վախճանվեց։

Դոկտոր Դաւմանի սպանութիւնը կատարվեց այսպէս.

3 տարի առաջ քիւրդ աղաներից մէկը, ուզելով սպանել տալ գերմանական միսիայի ներկայացուցիչ Էօրտաէլին, այդ ժամանակի դատաւորի աչքը վախեցնելու նպատակով մի ցոյց արած լինելու համար, նրա փոխարէն սպանել տուեց երիտասարդ

տերի և պարտէզների միջով։ Դուրս ես նայում պատուհանից, բացի մարգագետինների զմրուխտից և կապոյտ երկնքից ոչինչ չես տեսնում։ Հեռուն բլուրների մէջ երևում էր Թամարի բերդը, որը ծածկված էր ամբողջապէս փոքրիկ թփերով։

Ճանապարհին մենք անցնելու էինք փոքրիկ ներքնուղու (տունէլ) միջով, որը գտնվում էր «Զելեօնի Միս» կոչված ամարանոցի մօտ։ Այս ամարանոցը ինքն իրանից ներկայացնում է կախարդական տարածութիւն, որը մի կողմից շրջապատված է ծովով, իսկ միւս կողմերից բլուրներով, որոնք ծածկված են կանաչ թփերով և գոյնզգոյն ծաղիկներով։

Ներքնուղին չորս րոպէում կտրել-անցնելով՝ մեր գնացքն ընկաւ Չակվայի ճանապարհի վրա, և քիչ ժամանակից յետոյ մենք հասանք կայարան, որտեղ մի հայ պարոն միացաւ մեր խմբին։ Մենք պատրաստվեցինք գնալու թէյի և բամբակի տնկարաններն ու գործարանը տեսնելու։ Մեզ հետ էր նոյնպէս օր. Արմենուհի Հովսեանը, մեր աւ.-ուսուցչի եղբօր աղջիկը, որը ուսանողուհի էր Օդեսսայի կանանց բարձրագոյն դպրոցում։ Նա շատ լաւ ծանօթ լինելով այստեղի ճանապարհներին՝ առաջնորդեց մեզ։

Արևը արդէն բարձրացել էր իր կէսօրեայ տեղը. նրա այրող ճառագայթները, հանդիպելով սարերի հովութեանը, թուլանում էին ու կորցնում իրանց կիզիչ բնոյթը։ Քաղցր էր շնչել լեռնային օդը՝ միախառնված ծաղիկների անուշահոտութեան։ Անցնելով ամեն մի բլուրից, ամեն մի հովտից՝ մեր առջև բացվում էր մի նոր տեսարան, այնքան հիանալի, այնքան հրապուրիչ, որ կարծում էի, թէ իմ առաջ ոչ թէ իրական բնութիւնն է, այլ մի գեղեցիկ նկար՝ աշխարհահռչակ արուեստագէտի վրձինի տակից դուրս եկած։ Ուր որ նայում ես, լեռնային երկրի կանաչ մակերևոյթը ծածկված է բարձր և դալար խոտերով, նրանց միջից վառվում են ծաղիկների հազարաւոր տեսակները՝ իրանց հրապուրիչ պայծառութեամբ։ Տեղ-տեղ խուլ մրմունջով հոսում են վտակներ, ամօթխածաբար թագնված խոտերի մէջ. երբեմն նրանք նազանքով ցոյց են տալիս իրանց արծաթափայլ մակերևոյթները, և կրկին ծածկվում խիտ եղեգնաբոյսերի մէջ։ Ջրային փոքրիկ ծտերը միայն ուրախ-ուրախ ճօճկոտում են նոյն վտակների վրա, և իրանց կուրծքը դիպցնում են բիւրեղային մակերևոյթին, խլելով ալիքների միջից մի անբաղդ միջատ, որ տարվում էր անխնայ հոսանքի հետ։

Շուտով մենք բարձրացանք մի փոքրիկ բլուր, որտեղից գեղեցիկ կերպով երևում էին թէյի տնկարանները։ Թէյի մասին ոչ մի գաղափար չունէինք։ Դրանք փոքրիկ թփեր, աւելի ճիշդ՝ ծառիկներ են, մօտ 1 արշին բարձրութեամբ, որոնց տերևների վերջին մատղաշ մասերը մկրատով կտրում և հաւաքում են, ապա գործարանի առաջ ընդարձակ սալայատակ կալում չորացնում և այնուհետև մանրացնում զանազան գործիքներով։ Յած իջնելով այդտեղից մենք գնացինք տնկարանի մօտ, աւելի լաւ տեսնելու համար։ Տեսանք նոյնպէս կիտրոնի (լիմոն) տնկարանները, որոնք՝ համեմատած թէյի տնկարանների հետ՝ աւելի բարձր, գեղեցիկ թուփեր էին. մենք թուփերի վրա նկատեցինք փոքրիկ կանաչ ընկոյզի չափ բաներ. դրանք հէնց պտուղներն էին, որոնք դեռ խակ էին։

Այդտեղից դուրս գալով՝ մենք ուղղակի գնացինք թէյի գործարանը տեսնելու, նոյնպէս և բամբուկի անտառը։ Երբ մօտեցանք բամբուկի անտառին, մեզանից ամեն մէկն աշխատեց ամենից առաջ տեսնել. դրա համար էլ մենք վազեցինք այնտեղ և տեղ որոնելով նստեցինք ու անյագ հետաքրքրութեամբ սկսեցինք դիտել և միևնոյն ժամանակ հանգստանալ։ Որովհետև թէյի գործարանին շատ էինք մօտեցել, մեզանից մի քանիսն օրիորդ Արմենուհու հետ գնացին տեսնելու։ Այդ օրը տօն լինելու պատճառով՝ գործարանը փակ էր, բայց պատուհանից ամեն ինչ երևում էր։ Օրիորդ Արմենուհին մեզ բացատրում էր, թէ չորացած թէյի տերևները ինչպէս են վառարանների վրա բովում, ինչպէս են մանրացնում զանազան գործիքներով։ Այն գործիքը, որով մանրացնում են թէյի չորացած տերևները, նմանվում էր ջրաղացի. նրա վերևից ածում էին թէյը, իսկ ներքևից՝ մի լայն խողովակի միջից մանրացած պատրաստի թէյը դուրս էր գալիս և լցվում արկղների մէջ, որից յետոյ փակում էին արկղները և ուղարկում արտահանութեան։

Այս բոլորը տեսնելուց յետոյ՝ պատրաստվեցինք Չակվա վերադառնալ։ Մենք սրտանց ափսոսում էինք, որ հեռանալու էինք այդտեղից։ Ճանապարհին անցնում էինք պտղատու պարտէզների մօտով և պտուղները տեսնելով մեր բոլորի ախորժակն էր գրգռվում։ Մենք բոլորս էլ սաստիկ ծարաւ էինք։ Եւ որովհետև քիչ հեռուն մի աղբիւր կար, խնդրեցինք պ. Հովսեանից, որ թոյլ տայ ջուր խմելու. նա թոյլ տալ դժուարանում էր, որովհետև մենք յոգնած էինք, կարող էինք վնասվել. այնուամենայնիւ մի քիչ հանգստանալուց յետոյ մենք խմեցինք։ Ապա ճանապարհին իջևանեցինք մի պարտէզում, որտեղ գտնվում էր մի խանութ, և խանութատիրոջից խնդրեցինք թէյ և մեր պաշարեղէնները բերելով մի մեծ սեղան պատրաստեցինք ու, նստելով չորս կողմը, ուրախ-զուարթ, երգելով-ծիծաղելով քաղցներս յագեցրինք։

Ապա շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Չակվա։ Անընդհատ մենք անցնում էինք կանաչազարդ, ծաղկաւէտ մարգագետինների միջով. հաւաքում էինք ծաղիկներ, երգում էինք, ծիծաղում, այնպէս որ մենք չը նկատեցինք, թէ ինչպէս հասանք կայարան. կարծես թէ ճանապարհը կարճացած լինէր։

Երբ հանգստանալու համար Չակվայում ներս մտանք կայարան, այնտեղ մեր խմբին միացաւ մի հայ-կաթոլիկ լուսանկարիչ՝ Շահէնեան ազգանունով. նա ծանօթ էր մեր ուսուցիչ պ. Տէր-Կարապետեանին։ Այդ լուսանկարիչը ման էր գալիս շատ տեղեր և Բաթումի գեղեցիկ տեսարանները նկարում։ Նա յայտնեց, որ ուզում է մեզ նկարել, և խնդրեց, որ գնանք ծովեզրը, որպէսզի այնտեղ նկարէ մեզ։ Մենք բոլորս հաւաքվեցինք և մեծ ուրախութեամբ գնացինք նրա հետ միասին ծովեզրը. նա այնտեղ մեզ նստեցրեց և նկարեց։

Ծովեզրից հեռանալով մենք գնացինք կանաչազարդ թփերով ծածկված մի պարտէզ և այնտեղ էլ նստելով երկրորդ անգամ նկարվեցինք։

Երեկոյեան ժամը 5-ն էր, երբ եկանք երկաթուղու կայարան և տոմսակներ վերցնելով նստեցինք վագոնում՝ վերադառնալու համար Բաթում։ Վագոնի պատուհանից պարզվում էր շատ գեղեցիկ տեսարան. արեգակը վերևից դիւթիչ կերպով իր ճառագայթները տարածել էր մարգագետինների վրա, որտեղ արածում էին ոչխարների հօտեր։

Ժամը մօտաւորապէս 6-ն էր, երբ մենք հասանք Բաթումի կայարանը, ուր քիչ հանգստանալով դիմեցինք դէպի նաւահանգիստ, որովհետև մտադիր էինք մակոյկ նստել։ Մեզ խիստ ուրախացնում էր այն գիտակցութիւնը, թէ կրկին անգամ նստելու ենք մակոյկ։ Նաւահանգստում դարձեալ մեզ մօտ հաւաքվեցին բոլոր նաւաստիները և խնդրում էին, որ իրանց մակոյկը նստենք։ Բայց մենք էլի ընտրեցինք նոյն մակոյկները, ինչ որ առաջ էին։ Մակոյկներից մէկի տէրը հայ էր։ Եւ որովհետև մենք չէինք ուզում իր մակոյկով զբօսնել, նա ամենից էժան գնով համաձայնվեց մեզ ման ածել։ Բայց երբ ման գալուց յետոյ մենք տուինք իր առաջարկած գումարը, նա չը վերցրեց և պահանջեց այնքան, որքան ստացել էին միւսները. և մենք ստիպված տուինք, տեսնելով որ անազնիւ մարդու հետ գործ ունենք։

Ժամը 7-ն էր, երբ մենք նստեցինք մակոյկները։ Ծովը շատ հանդարտ էր այդ րոպէին։ Բացի մեզանից՝ ծովի վրա կային ուրիշ շատերը։

Մեր ուշադրութիւնը գրաւել էր վերջալոյսը. մեր մակոյկը գնում էր դէպի այն կողմը, որտեղ մայր էր մտնում արեգակը, որպէս զի աւելի պարզ տեսնենք վերջալոյսը։ Բաթումի արևելեան անտառապատ լեռները ծածկվեցին երեկոյեան ստուերով, իսկ ծովի վրա արեգակի հրեղէն գունդը այնպէս էր մեծացել, որ կարծես թէ ուզում էր ամբողջ երկրագունդը կրակ դարձնել։ Լոյսը հետզհետէ աղօտ գոյն էր ստանում. միայն ոսկեգոյն ամպերը, որոնք ահագին բեկորներով գլորվում էին օդի բարձրութեան մէջ, դեռ արտափայլում էին հանգչող արեգակի վերջին ճառագայթների տակ՝ ծիրանի գոյներ։

Գեղեցիկ երեկոյ էր, ծովային երեկոներն այն ժամը, երբ քաղցր հնչվում է նաւաստիների երգը, որոնք մակոյկով մեծ խմբերով ման են գալիս ծովի երեսին, և միևնոյն ժամանակ ամեն մէկը թիակներ վերցրած թիավարում էր։ Նոյն ժամին, թեթև քամին նազելով քսվում է քո երեսին և բարակ մելօդիաման հնչիւններով մրմնջում է. «Շնչիր լի կրծքով անուշահոտութիւնը, որ ես խլել եմ հազարաւոր ծաղիկներից»։

Ինձ համար զգալի էին այս բոլոր ձայները. ես լսում էի զեփիւռի մեղեդին, նաւաստիների երգը. ինձ գրաւել էր նոյնպէս փարոսը, որը ուղիղ մեր դիմաց այրվում էր զանազան գոյներով. իմ ընկերուհիներից մի քանիսը պնդում էին, թէ այն հրեղէն բոցը, որ այրվում է փարոսի մէջ, արեգակի ճառագայթների արտափայլումն է. իսկ մենք յետոյ իմացանք, որ դա մեծ լապտեր է, որ վառվում է նրա համար, որպէս զի նաւորդներն իրանց ճանապարհի ուղղութիւնը չը կորցնեն։ Մի ամբողջ ժամ մենք ման եկանք ծովի վրա, իսկ երբ մակոյկից դուրս եկանք, մենք բոլորս էլ սրտանց ափսոսում էինք։

Ժամը 8-ն էր, երբ մենք կառքեր նստելով գնացինք դպրոց. թէյ խմելուց և հանգստանալուց յետոյ՝ նորից գնացինք ծովեզր և այնտեղ մի ժամից աւելի մնալով՝ հաւաքեցինք ծովային գեղեցիկ հարթ քարեր և լցրինք մեր արկղները՝ հետներս Ախալցխա տանելու համար։ Մենք բոլորս էլ մի գծի վրա կանգնելով վերցնում էինք քարեր և նետում էինք ծովը, և մեզանից ուրախանում էր նա, ով կարողանում էր քարը աւելի հեռու ձգել։ Քար նետելու մէջ ես համարեա թէ ամենից յետինն էի. ինչքան աշխատում էի հեռուն գցել, ինձ չէր աջողվում։

Սօֆիա Գազեան

Ախալցխա

(Շար. կը լինի)

լեզուագէտ դօկտ. Դաժմանին, որն եկել էր Քիւրդիստան՝ տեղական լեզուներն ուսումնասիրելու։ Երիտասարդի սպանման համար արիւնագին 15,000 թուման են ստացել ծնողները. այդ գումարից օգտվել չը կամենալով՝ տուել են շուէյցարական մի ընկերութեան՝ քիւրդերի մէջ կրթութիւն տարածելու համար։ Յիշեալ գումարը տարաբաղդաբար չահագործում է Ուրմիայում նստած յայտնի խաչագող՝ հայութեան ու ասորիութեան անյայտ Փիրանը, որ երկու շուէյցարուհիների հետ նստած 20 աշակերտ ունեցող մի դպրոց է կառավարում։ Կարապետ եպիսկ. մի անգամ գրել է հանգուցեալ երիտասարդի մօրը՝ դրամները առաւել բարենպատակ կերպով գործադրելու մասին։ Թեմակալը մտադիր է մի երկրորդ անգամ գրել և առաջարկել, որ այդ գումարով Սօվուջ-Բուլաղում միջազգային մի կրթարան հիմնվի, ուր ուսանեն թէ հայը, թէ ասորին և թէ այլ քրիստոնեայ տարրեր։ Չը մոռանամ յայտնելու, որ Ատրպատականի ոչ մի անկիւնում չը կան այնչափ թշուառացած հայեր, ինչպիսիք են Սօվուջ-Բուլաղի օրապահիկով ապրող, հայութիւնից կտրված թշուառ հայեր։

Սօվուջ-Բուլաղից Կարապետ եպիսկոպոս ճանապարհվեց Դարալաք գիւղը, որն երկու ժոռնչափ հեռու է գտնվում։ Այս գիւղում բնակվում են 30 տուն հայ և 30 տուն ասորի։ Երկուսի յարաբերութիւններն այն աստիճանի սերտ են, որ անխտիր միմեանց աղջիկ տալիս և առնում են։ Դարալաքում ես Հայուհեստ Բար. Ընկերութիւնը պահում է մի կրթարան. երևանցի վաճառական Տիգրան Աֆրիկեանի նպաստ կտրվելուց յետոյ վերջինս էլ պէտք է փակվէր. սակայն դեռ ևս շարունակվում է բաց մնալ շնորհիւ ուսուցիչ Սրբահամ Տէր-Ցակոբեանի անձնուէր ջանքերին ու զոհաբերութեան։ Թէպէտ մի հայ հարուստ խոստացաւ ուսուցչին օգնել նիւթապէս, սակայն խոստումը չը կատարվեց. և կարող է պատահել որ վերջ ի վերջոյ փակվի ուսումնարանը, եթէ չը հասնի մի բարերար ձեռք։ Այս շրջանում ոչ դատաւոր գոյութիւն ունի, ոչ օրէնք. ամենայն ինչ սրի ծայրից, ամենայն ինչ բարբարոս աղաների քմահաճոյքից է կախված։ Եթէ երբեմն չոր հաց էլ է ունեցել են ուտելու, այսօր այդ էլ չունեն և մատնված են ռանոսցին թշուառութեան։ Այս շրջանի հայերը Սինեաց աշխարհից են գաղթել յայտնի մեր պատմական Դաւիթ բէգի կռիւների ժամանակ. յաղթական կռիւներ են մղել, բայց վերջապէս ընկճվել են թւով անհամեմատ բարբարոսներից և դարձել այսօրվայ վայրենիների բաղդած ստրուկներ են։ Ղարաբաղի մելիքների զարմից դեռ կենդանի է մելիք Սայադի տունը Դարալաքում. որի կենդանի, բայց հիւանդ նահապետին այցելեց Թեմակալը և մխիթարեց իր խօսքերով։ Միակ ելքը այս շրջանի և Սուլդուզի հայերի՝ գաղթելն է. այդ պատճառով խօսք անգամ լինել չէ կարող գիւղի եկեղեցու և դպրոցի մասին։ Ցաջորդ թղթակցութեամբ կը գրեմ Սուլդուզի, Բարանդուզի և Ուրմիի նկատմամբ։

Հայկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստրը Բարձրագոյն հաճութեամբ որոշ ժամանակով ծառայութեան գործերով մեկնեց Պետերբուրգից։

Պետական քարտուղար սենատոր Մարկովը մեկնեց արտասահման։

ԳՈՄԷԼ։ Գիւղացիները վճռեցին իրանց հաշւով արձան կանգնեցնել Ազատարար Կայսրին։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Սինէլնիկօվում միջազգային բանկից յափշտակված 82,000 րուբլին գտնվեց և յանձնվեց պետական գանձարանին։

ՍՄՈԼԷՆՍԿ։ Կատաղի մրրիկը մօտ 30,000 րուբլու վնասներ պատճառեց քաղաքի զանազան մասերում։

ԱՏԿԱՐՍԿ։ Դվօէնկի գիւղում հրդեհը ոչնչացրեց 82 խրճիթ հացի պահեստատեղիներով։ Վնասները 50,000 ր. են։

ՏԱԳԱՆՐՕԳ։ Դուման որոշեց հիմնել Չէխովի անուան գր.-ընթերցարան, յատկացնելով 35,000 րուբլի։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Այրվեց Կարգաշի մեծ ծխախոտի պահեստը։ Վնասը 80,000 րուբլուց անցնում է։

29 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ցերեկով օֆիցէրական օդագնացութեան դպրոցի բակից բարձրացան երկու աէրօպլան։ Փօբբը՝ № 522՝ ծխախոտից բռնկվեց և փչացաւ։ Գազային զաւօդի բակից ցերեկով բարձրացաւ նաև համառուսական աէրօկլուբի «Վասիլիյ Կօրն» օդապարիկը չորս ճանապարհորդներով և թռաւ դէպի Ֆինլանդիա։

ՅԱՐՕՍԼԱՒԼ։ Դաբաղ հիւանդութիւնը գաւառում վերջացաւ։ Նահանգում հիւանդացան ընդամենը 80,000 գլուխ տաւար։

ՄՕՍԿՎԱ։ Տվէրի բուլվարում ոստիկանը փորձեց կալանաւորել մի անյայտ տղամարդու և կնոջ, որոնք նկատվել էին գողութեան մէջ։ Կինը մահացու վիրաւորեց ոստիկանին և փախաւ ընկերակցի հետ։ Ոստիկանների հետապնդման ժամանակ տղամարդը ատրճանակով սպանեց կնոջը և ինքն էլ սպանվեց հրացանի գնդակով։

ՊՕԼՏԱՎԱ։ Պիրեատինի գաւառում կոմսուհի Մուսին-Պուշկինի կալուածքում շոգեչարժ կարքի պայթումից սպանվեցին կալուածքի կառավարիչ եղբայրը և երեք բանւոր. 4 հոգի հաշմանդամ են, 6 հոգի ստացան խանձուածքներ։

ԲԼԱԳՕՎԷՇՉԷՆՍԿ։ Ամուրեան մասնաժողովի նախագահ Գօնդատին, գծի կառուցման կառավարիչ Վուրցէլ և ինժեներ Տրէգուբօվը. Ամուրեան շրջանի ապագայ կենտրոնի տեղը զննելուց յետոյ, կանգ առան Սուրաժէվկայի վրայ։ Միջին ամուրեան երկաթուղագծի կառուցման աշխատանքները՝ Վուրցէլի ասելով՝ ընթանում են չափազանց արագ։ Վերջնական հետախուզումը հնարաւորութիւն տուեց ճանապարհը կրճատել 20 վերստով։

ԲԵՐՆԷՅ (Նահանգ Էյր)։ Երէկ այստեղ գծից դուրս թռաւ Շերբուրգի գնացքը։ Մեքենավարը, աւագ կոնդուկտորը և չորս ճանապարհորդներ սպանվեցին։

ՑԻՒՐԻԽ։ Անցան ռուս աւտոմօբիլիստ Նագէլը և միւսները, որոնք գնում են Սէնգոտարդու։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 38
(ե.հ.կ.) 909. 100—12

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուսումնարան եւ Պանսիոն
ՕՐԲԷԼ ՕՐԲԷԼԵԱՆՑԻ
(ՀԻՄՆՎԱԾ 1844 ԹՒԻՆ)
Ընդունվում են երթեւեկ աշակերտներ և աշակերտուհիներ, իսկ գիշերօթիկ՝ միայն աշակերտներ. և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների ստորին դասարանների։ Ընդունելութիւնը սկսվում է օգոստոսի 25-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 6-ից։
Лермонтовская улица №, 1.
(ու.կ.ե.հ.) 998. 4—3

ԻՄ **Կրօնի դասագրքեր** ցանկացողները կարող են դիմել բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовская ул. 20)։ Զեղչը՝ ինչպէս յայտարարված է գրքերի կազմի վրայ։
ՍԱՀԱԿ ա.-քահ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
(ե. ու.) 903. 10—7

Քամալեանց Ս-ի
Կազմած կրօնի գրքերը
1. Կրօնի դասատուութիւնը Ա. բաժանմունքում. ուսուցիչների ձեռնարկ, գ. 40 կ.
2. Կրօն, Ա. տարի, բարոյախօսական առակներ և Յիսուսի կեանքից պատմուածքներ, 15 կ.
3. Կրօն, Բ. տարի, Նահապետների կեանքից պատմուածքներ, 20 կ.
4. Կրօն, Գ. տարի, Մովսէսից մինչև թագաւորութեան բաժանումը, 35 կ.
Գումարով գնողներին 20% զեղչ
Դիմել՝ «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրախանութներին և կազմողին՝ Թիֆլիս, Միքայէլեան փող. № 82. Շուտով լոյս կը տեսնի՝ Կրօն, Դ. տարի, Մարգարէներ։
(ե. հ. կ.) 983. 5—4

Մի ինտելիգենտ հայ ընտանիքում
ընդունում են
ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
կարող են օգնել դասեր պատրաստելու։
Елизаветинская ул. д. 1, кв. 2-ая.
(ա. օ.) 1013. 2—1

---

2 ԶԳԵՍՏԱՑՈՒ 5 ր. 25 կ.
Տարածելու նպատակով՝ 5 ր. 25 կոպէկով մենք ուղարկում ենք աշնանային կամ ձմերային 2 զգեստացու կտոր. 1) 4¼ արշ.-տղամ. զգեստի համար ֆրանս. տրիկօ, բրդից, շատ ամուր, գործնական և մօդային նկարներով. 2) 8 արշ. «Անգլէյ», կտոր կանացի զգեստի համար, միանգամայն մօդային և գեղեցիկ բրդէ կտոր։ Այսպիսի 2 կտոր ամենալաւ տեսակից՝ 6 ր. 25 կ.։ Ճանապարհածախսը 55 կ., Սիբիր՝ 1 ր. 15 կ.։ Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց՝ ճանապարհածախսը մեր հաշւին։ Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւորութեամբ։ Եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։
Հասցէագրել. ЛОДЗЬ, № 43. Фабрика суконно-шерстяной мануфактуры.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ե.) (В. 55925) 994. 3—1

ՈՎ ԽՆԱՅՈՒՄ Է ԿՈՊԷԿԸ,
ԿՈՐՑՆՈՒՄ Է ՌՈՒԲԼԻՆԵՐ!!
Մի գրաւէք հրապուրիչ էժանութիւններով, որովհետև կողոպտում էք ձեր փողերը։
3 ՌՈՒԲԼԻ 90 ԿՈՊԷԿՈՎ
ուղարկում եմ խիստ ամուր և գեղեցիկ բրդէ կտոր՝ չէվիօտ «ՎԱՇԻՆԳՏՕՆ». 4¼ արշին, տղամարդկանց աշնանային ամբողջ զգեստացու։ Կտորը գործված է մօդային [illegible], սև կամ [illegible] նախշերով. սև. մուգ-կապոյտ. [illegible] կամ ձիթագոյն։ Չէվիօտ «ՎԱՇԻՆԳՏՕՆ» կտորի ամենալաւ տեսակը՝ 4¼ արշ.—4 ռուբ. 75 կոպէկով։ ԾՐԱՐԵԼԸ ԵՒ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԻՄ ՀԱՇՒԻՆ։ Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և ԱՌԱՆՑ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ։ Սիբիրի համար ամեն մի կտորին աւել հաշվում է 75 կ.։ Ապրանքը եթէ դուք չը հաւանէք՝ փողը վերադարձնում եմ։ Ով պատուիրէ 3 կամ աւելի կտոր՝ [illegible]
ՄԻՆՉՇԱՏԱՑՆ ԶՐԻ։
Պահանջները հասցէագրել՝ г. ЛОДЗЬ. № 170. М Б. ТОРЧИНСКОМУ. Почт. ящ. 25.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(կ.) (В. 57367) 1009. 5—1

Լոյս տեսաւ
ՁԵՌՆԱՐԿ
ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՆ
(Ուղղագրական եւ բերական. վարժութիւններ)
ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԷԿ
Դիմել՝ Александрополь, учителю М. Тархчіанъ, կամ՝ Թիֆլիսի գրավաճառներին։
(օ.մ.) 979. 10—4

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ
ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Կովկասեան հոգաբարձուից թոյլատրված է գործածութեան միջնակարգ դպրոցներում։
I և II պրակները՝ 40-ական կոպ.։
III պրակը տպվում է և լոյս կը տեսնի սեպտեմբերին։
Դիմել հայ գրավաճառներին և հեղինակին՝ Ալէքսանդրօպօլ։
(օ.մ.) 1003. 3—2

Մամուլի տակն է
ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ
Բ. ՏԱՐԻ
Պատկերազարդ
Ըստ ՆՈՐԱԳՈՅՆ ԾՐԱԳՐԻ
Միւս տետրերը լոյս կը տեսնեն յաջորդաբար՝ նոյն ուղղութեամբ։ Զեղչ 25%։ ՍԱՀԱԿ ա.-ք. ՍԱՀԱԿԵԱՆ
(ա.օ.) 991. 5—5

„**Գուտտենբերգ**“ գրախանութում վաճառվում է Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ հետևեալ նոր աշխատութիւնը՝
Մի էջ հայկական ուսուցման պատմութիւնից, գինն է 60 կ.
Այնտեղ են վաճառվում նոյն հեղինակի և միւս աշխատութիւնները՝
Նոր Այբբենարան ուսուցիչ. համար 75 կ.
Նոյնը աշակերտների համար 15 կ.
Իրազննական դասեր 1 ր.
Начальн. русск. Хрестоматія для армянъ 1-я книжка 55 կ.
Նոյնը 2-книжка 75 կ.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“.
(ե. ու.) 981. 8—3

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
Թիֆլիս, Նաբերեժնայա, Վերայի կամուրջի մօտ, № 19.
Ի. ՖՕՆ-ԲՐԷՆՆԵՐԻ
Հեղինակ դասագրքի՝ ընդունված ռուս. մինիստր. գիտական կոմիտէի եւ Ֆինանս. մինիստր. ուսումն. բաժ. կողմից իբրեւ ձեռնարկ եւ դասագիրք բոլոր առեւտր. դպրոցներում։
Դասարանները հիմնված են 1890 թ. և ուսումն. իշխան. կողմից ճանաչված են օրինակելի։ Դասարաններն ընձեռում են երկու սեռի անձերին, որոնք ցանկանում են ունենալ հաշւապահի, թղթակցի, գործակալի և այլ պաշտօն, յատկապէս առևտր. գիտութիւններ։
Դասարաններում աւանդվում են հետևեալ առարկաները. 1) ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ (կրկնակի, իտալական) եւ այլ տեսակի՝ բանկային, ֆաբրիկային, քաղ. եւ զեմստ. ինքնավար., գիւղ. մենավաճառի, գործարանային, գիւղատնտեսական եւ այլն։ Դասաւանդութիւնը կատարվում է միանգամայն գործնական մէթոդով եւ սովորողը առաջին դասից եւեթ ընտելանում է ինքնուրոյնաբար վարել գրքերը։ 2) ԱՌԵՒՏՐ. ԹՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ.—Բանկային, ապրանքային, մուրհակային եւ այլ խնդիրների լուծումներ։ 3) ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.—Ինքնուրոյն կազմումն առևտր. նամակների՝ հանդերձ հաշւապահ., առևտրա-թւաբանական եւ վաճառ. գիտութեամբ։ 4) ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ.—Վատ ձեռագրի ուղղումն եւ բազմաբնոյթ տառերի ուսուցումն։ 5) ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ.—Ծանօթացումն մուրհակային, գէրբօվային, արդիւնաբերական, կրէդիտային եւ այլ կանոններին։ 6) ԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՌԷՄԻՆԳՏՕՆՈՎ.—Սովորողների տրամադրութեան տակ է դրվում զանազան սիստեմների 10 հատ մեքենայ, պարապմունքներից ազատ ժամանակը թէ իրանց գրաւոր զբաղմունքները կատարելու եւ թէ միաժամանակ հմուտ ղեկավարի հսկողութեամբ ծանօթանալու մեքենաների տեխնիկայի եւ մեխանիզմի հետ։ 7) ԱՊՐԱՆՔԱԳԻՏՈՒԹԻՒՆ.—Սովորողները ծանօթանում են տեղ. հրապարակի վրա գտնվող յայտնի տեսակի ապրանքների քիմիական կազմուածքի եւ նրանց յատկութիւնների որոշելու հետ։ Այդ նպատակի համար կայ կաբինէտ՝ անհրաժեշտ պրիբօրներով։ 8) ԹՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՄՐԻՉԻ ՎՐԱ.—Գործողութիւններ համրիչով։ Թւաբան. եւ հանրահաշւական խնդիրներ։ Պրձատ եւ ամբողջ. ձեւեր։ Բոլոր թւաբան. գործող. եւ խնդիրները ամբողջ դասընթացքի ժամանակ լուծվում են համրիչով։
Սովորողների ընդհանուր եւ մասնագիտ. զարգացման համար կայ ԳՐԱԴԱՐԱՆ դասաւանդվող առարկ. վերաբերեալ ամենալաւ դասագրքերով (մօտ 1000 գիրք)։ Գրքերը կարելի է եւ տուն տանել։ Դասարանների դասընթացքն աւարտողները ձրիաբար կարող են օգտվել՝ գործնական հմտութիւն ձեռք բերելու համար՝ Ի. Ֆօն-Բրէններ առևտրա-արդիւնաբեր. և տեխն. բիւրօյի գրասենեակում (Սերգիեվսկայա փ., № 4), որ, անպայման, օգտակար կը լինի գործնական տեսակէտից։
Դասարաններն ունեն 3 բաժանմունք. I բաժ. ընդունվում են գրագէտ անձեր, II-ում՝ քաղաքային կամ 3-դասեան դպրոցաւարտներ, իսկ III-ում՝ գործնական—հաշւապահ. և առևտր. թւաբան. գիտողներ։ Իւրաքանչիւր բաժ. դասընթացքը տեւում է 5 ամիս։ Պարապմունքների սկիզբը ՍԵՊՏԵՄԲ. 15-ից։ Խնդիրները եւ տեղեկ. ընդունվում են դասարանների գրասենեակում՝ Թիֆլիս, Նաբերեժնայա, Վերայի կամուրջի մօտ, սեփ. տ., № 19 կամ Սերգիեվսկայա փող., № 4. Գրասենեակը բաց է ամեն օր՝ առ. ժ. 9—1-ը եւ երեկ. ժ. 5—8-ը։ Տէլէֆօններ—929 եւ 1044. (օ. մ.) 939. 20—7

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Արշակ Չիլինկարեանի եւ Տիգրան Ռաշմանեանի
ԴԱՍԸՆԿԵՐ Բ. ՏԱՐԻ
Մէջ ընդ մէջ կան ձեռագիր յօդուածներ արտագրութեան եւ ուղղագրական որոշ կանոնների համար։
ԿԱԶՄԱԾ 60 ԿՈՊԷԿ
ԴԱՍԸՆԿԵՐ Ա. տարի (այբբենարան-ընթերցարան)
ԿԱԶՄԱԾ 50 ԿՈՊԷԿ
Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, Թիֆլիս. գումարով առնողներին զեղչ 20%, գրավաճառներին զեղչ 25%։
(ե. շ.) 938. 8—5

Մամուլից եմ յանձնել եւ մինչեւ սեպտեմբերի 5-ը պատրաստ կը լինի
„ԱՐՓԻԿ“—ԱՅԲԲԵՆԱՐԱՆ
Հայախօս և օտարախօս հայ մանուկների համար։ Գնի և վաճառման պայմանների մասին կը յայտարարեմ առանձին։
Վաճառվում են նախկին պայմաններով. Մայրենի լեզու, Ա. տ. 20 կ.։ Մայրենի լեզու, Բ. տ. 30 կ.։ Մայրենի լեզու, Գ. տ. 50 կ.։ Մայրենի լեզու, Դ. տ. 55 կ.։ Հէնչելի՝ Ժողովածու թւաբանական խնդիրների, Ա. և Բ. տարի 35 կ., Գ. տարի 50 կ.։ Քերականութիւն Մայրենի լեզուի 50 կ.։
Դիմել «ԳԻՐ» և «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցներին և ինձ. Հասցէս՝ Թիֆլիս, Միքայէլեան պրօսպէկտ № 70.
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ
(օ.մ.) 990. 3—3

ՋԳՐԱՇԷՆԻ հայոց դպրոցի հոգաբարձութիւնը սրանով յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ իր խնամքին յանձնված դպրոցում արդէն սկսված են ընդունելութիւնները։ Ուսման վարձն է՝ I, II և III բաժանմունքների համար տարեկան 10 ր., իսկ IV բաժ. համար՝ 15 ր.։
(կ.ե.) 1006. 2—2 Հոգաբարձու՝ Յ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առևտրական Գիտութիւնների Կուրսերում
Նոր մէթօդով սովորեցվում են
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Շտապողական դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24/4. Տէլէֆօն № 976.
(ե.հ.շ.) 999. 0—2

Լոյս են տեսել և վաճառվում են
ԼԵՒՈՆ ԲԱԲԱՅԵԱՆԻ
(Ուսուցիչ ընդհ. աշխարհագրութեան Ներսիսեան դպրոցում)
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
(Կազմված ըստ գերմանական և ռուսական դասագրքերի)
ՄԱՍՆ Ա. Բնական աշխարհագրութիւն. Կովկաս և սահմանակից երկիրներ (Թիւրքահայաստան և Պարսկահայաստան), 4-րդ և մասամբ 3-րդ տարվայ դասընթաց, (Հայրենագիտութիւն և ընդհ. աշխարհագրութիւն)։ Բազմաթիւ մեծադիր պատկերներ, գինն է . . . 60 կոպ.
ՄԱՍՆ Բ. Քաղաքական աշխարհագրութիւն, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա և Աւստրալիա 5-րդ տարվայ դասընթաց, գինն է . 65 կոպ
ՄԱՍՆ Գ. Քաղաքական աշխարհագրութիւն, Եւրոպա, 6-րդ տարվ. դասընթաց, գ. 50 կոպ
Հրատարակութիւն «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցի, Թիֆլիսում։
(ե.հ.կ.) 982. 8—4

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ
Երկու սեռերի անձերի համար
(Տասնեւմեկերորդ տարի)
Դասընթացքներում աւանդվում են՝ կրկնակի իտալական հաշւապահութիւն արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, առևտրական թւաբանութիւն, առևտրական թղթակցութիւն, առևտրական իրաւունք, գեղագրութիւն և ցանկացողներին՝ ըէմինգտոնով գրելու ուսուցումն։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1910 թ.։
Դասընթացքները շարունակվում են 6 ամսից ոչ պակաս։ Պարապմունքներն երեկոները՝ շաբաթական 3 անգամ։ Ամբողջ դասընթացքի վճարն է 40 րուբլի։ Խնդիրները՝ Թիֆլիսի Առևտրական Դպրոցի Վերատեսչի անունով ընդունվում են Առևտրական Դպրոցի գրասենեակում, առաւօտեան ժամը 10-ից մինչև 1-ը ցեր.։
(ու. կ. ե.) 960. 6—6



ՀԻՊՆՈՍԻԶՄ
ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ
Հիպնօտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան
◆
Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ սքանչելի ոյժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրօֆէսիօնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօսացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն Հիպնօտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգետեսութեան և Տելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կոպէկի նամականիշ ճանապարհածախսի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.
(ե.շ.) 689. 100—25

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկաներ 4 ամսվայ ընթացքում։
Կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվում են սեպտեմբեր ամսից ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ և սղագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և որոշ վճարով։
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1910 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Դասընթացքն աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ՝ բացված են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում ենք դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22. Телефонъ № 744.
Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքցիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կ.։
(կ.ե.հ.) 930. 0—8

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ՉԻԹԱԽՕՎԻ կտաւի գործարանից մնացորդ ջուլհակային տորքեր և մանելու մեքենաները. նոյնպէս և մեքենաների մասեր, շղթաներ, անիւներ, վալեր և թել մանելու այլ և այլ գործիքներ, երկաթի և չուգունի կտորտանքներ։
5-րդ քաղաքամաս, Վորոնցովսկայա փողոց, № 58.
Գրաւոր դիմել՝ Չուղուրէթ, Եկատերինինսկայա փող. № 4, Թումանեանցին։
(ե.հ.կ.) 978. 4—4

Типографія „Экономія“ Больш.я Ванкская № 3.
]